


ՍՈՒՐԵՆ ՎԱՀՈՒՆԻ
ԵՐԳԵՐԻ
ԳԻՐՔ





ՍՈՒՐԵՆ ՎԱՀՈՒՆԻ

891.99

4-18

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1981 թ.

ԵՐԳԵՐԻ ԳԻՐԳ

(ՀԱՏԸՆՏԻՐ)

4889
A 6069



ՀԱՅԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

1949

Կազմը և կալոնսիսուկները
Նկարիչ ՀՈՎ. ՇԱՎԱՐՇԻ

СУРЕН ВАГУНИ
КНИГА ПЕСЕН
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1949 г.





Յ Ն Ո Ւ Ն Ը

Ի՞նչի հետ հեղ համեմատեմ...

ՋԱՄԻՈՒԼ

Միտք եմ անում Ջամբուլի սլեռ և քեզ արժանի խոսք չեմ
գտնում.

Ես քեզ ի՞նչպես արեալ եմ, քանի որ նա մայր է մտնում,
Ի՞նչպես չափեմ օվկիանոսի հետ, երբ նա ունի ամբողջ հասակ,
Ի՞նչպես ես քեզ լեռ անվանեմ, երբ լեռն է մութ ամպերի տակ.
Նթեալ եմ անշեջ կրակ--նա էլ վառվում է հեքիաթում,
Իսկ դու շողում ես անհատնում երկրի վրա և մեր սրտում:

Ի՞նչի հետ քեզ համեմատեմ: Ահա ծովեր, երկինք ու հող,
Ահա կապույտ հեռատառաններ, արշալույսների շաղկապող,
Ահա պայծառ հովիտներում վառվող ծաղկունք ու ծիածան,
Ահա ձորեր անդնդախոր, ահա դեպքեր որոտաձայն...
Բայց ո՞րի հետ համեմատեմ. չէ՞ որ նրանք միշտ էլ կային,
Երբ որ չքնաղ այս աշխարհում ապրում էր վիշապ մարդկային:

Ի՞նչի՞ հետ քեզ համեմատեմ: Ահա կաղնին լեռնաստանում.
Ահա ժայռը, որի վրա արձնվել են հանգստանում.
Բայց ո՞ր ժայռն է միշտ անսասան, կամ ո՞ր կաղնին հողմաշառաչ
Հավերժ կանգնեց ու դիմացալ կայծակների զարկի տառջ...
Եվ ես անդոր միտք եմ անում--ի՞նչի՞ հետ քեզ համեմատեմ,
Ու քեզ արժանի ոչ մի պատկեր, ոչ մի նոր խոսք ես չգտնեմ:

Քայց ես գիտեմ ծանոթ մի բառ, և երբ ես այդ բառը ասեմ՝
Պիտի տեսնեն ըտերն իսկույն ինչ որ ունենք լավ ու վսեմ,
Պիտի տեսնեն այդ բառի մեջ և՛ արեւներ, և՛ սեր, և՛ բախտ,
Ժողովուրդներ վերածնված, նրանց սիրո դաշինքն անխախտ,
Պիտի տեսնեն ազատ մարդուն, նրա մտքի թռիչքն ազատ,
Հաղթանակներ շունդալից, նոր դարուններ շքեղազարդ:

Պիտի տեսնեն աշխարհը մեր,—մեր այդ երազն ամենաթանկ,—
Եվ այն ուղին, որով մի օր այդ երազի շեմքը գտանք.
Այդ բառի մեջ ազդեր բազում և սերունդներ, որ սլիտի գան,
Պիտի տեսնեն այս աշխարհի չքնաղ այսօրն ու ասլադան...
Ահա ես այդ բառը գիտեմ—ամենից լնմն, իմաստալին,
Իսկ դա միայն անունն է քո, և այդ անունն է—Ստալին:

1939 թ.

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԸՆՏՐՅԱԼԻՆ

Դեռ երեկ, ապա մի անեղ տարերքում,
Երբ պատմությունն էր ընտրող դատավոր,—
Քո օգտին էինք մենք քվեարկում
Թնդանոթների ձայնով անավոր:
Քո օգտին էինք մենք քվեարկում—
Մեր սվինների միլիոն մասներով,
Եվ քո պատկերը պահած մեր հոգում՝
Անցնում փորձության բոլոր վիճերով:

Եվ ուղիներում փոթորկաշառաչ
Դու եղար մեզ հո՛ւյս, եղար զորավար,
Եվ դրա համար մեր թափի առաջ
Փլվեցին բոլոր բերդերը խաղար:
Եվ դրա համար էլ չի որոտում
Թնդանոթների երգը մատրական,
Եվ դու ես նորից մեզ առաջնորդում
Դեպի մեր խաղաղ, շքեղ ապագան...

Եվ անա բոլոր նրանց անունից,
Որ հաղթանակի բոցերում ընկան,
Մեր զավակների և մեր անունից,
Նրանց անունից, որ նոր պիտի գան,
Որ այս աշխարհում նոր պիտի ծնվեն,—
Ներկա և դալիք օրվա անունից—
Մենք քեզ տվեցինք մեր սիրտն ու քվեն,
Քեզ վստահեցինք մեր բախտը նորից:

Քեզ վստահեցինք, որ այսուհետե
Մեր բերդը լինի հավերժ անառիկ,
Որ մարդը ժպտա և շնչի թեթե՛
Մոռացած ամեն կորուստ ու կարիք.
Որ ընդմիջտ լռի ինչ նենդ է ու հար,
Որ զվարթ հնչեն թե քնար, թե վին,
Որ կյանքը դառնա լույսի մի տաճար
Եվ իր դմբեթով հասնի արևին:

Քեզ վստահեցինք, որ սարսեն նրանք,
Ովքեր աղետի հրդեհն են վառում.—
Որ ատոմային ուռմբից էլ ահեղ՝
Մեր ձայնը թնդա արար աշխարհում.
Մենք քեզ ընտրեցինք, առաջնորդ մեր մեծ,
Եվ ահա մեզ հետ, մեզ պես խանդավառ՝
Պատմությունն էլ քեզ իր քվեն տվեց
Եվ ընտրեց բոլոր դարերի համար ...

40 Թ. փետրվարի 9

ՀՐԱԺԵՑՑ ԳՈՐԻԻՆ

Ինչքան էլ ես գընամ հեռու,
Քնացքն ինչքան էլ օրորի—
Դու կմնաս իմ հուշերում,
Նվիրական, չքնաղ Դորի:

Իմ հուշերում դու կմնաս
Այսօրվա պես արևանիստ,
Բարդիներով քո հեղանաղ,
Գիտով պղտոր ու անհանգիստ:

Նորից մաքով ես կդիտեմ
Քո հին բերդից սրածանիք,
Կատարածվեն նորից իմ դեմ
Ամեն փողոց, ամեն տանիք:

Նվ կտեսնեմ հեռու մի տուն՝
Իր պատերով խաբիտուլ ու հին,
Այնտեղ մի օր փոքրիկ որդուն
Օրոր երգեց վրացուհին:

Ահա ներսում—մաշված դորդեր,
Մի հին սեղան ու երկու բարձ,
Ահա դեղին մի ինքնառ—
Առաջվա պես մաքուր սրբած:

Այստեղ ժպտաց մանուկն ըմբոստ,
Կոշկակարի աղքատ որդին,
Որ բարձրացավ սրտալնդոստ,
Արե բերեց ժողովրդին:

Այս հնամյա տանը ծագեց
Արևն անմար, ըմբոսա Սոսոն
Որ շողշողաց հզոր ու մեծ
Հորիզոնից մինչ հորիզոն,

Որ մեզ ժպտում է հրեմլից
Որպես ընկեր և որպես հայր...
Թանգ ես անչափ և սիրելի,
Առաջնորդի ծննդավայր:

Թանգ է ամեն փողոց ու տուն,
Արևդ ջերմ ու հուրհրան,
Եվ մանուկները քո ժպտուն,
Որ հիշեցնում են միշտ նրան...

Ու ինչքան էլ գնամ հեռուն,
Գնացքն ինչքան էլ օրորի՝
Դու կմնաս իմ հուշերում,
Նվիրական, չքնաղ Գորի:

37 Թ.

ՂԵԿԱՎԱՐԸ

Կա ահեղ մի ժամ, այդ ահեղ ժամին
Քաղաքն է լռում, լռում է քամին:
Պատվի են առնում պահակները լուռ,
Բացվում է դանդաղ երկաթյա մի դուռ,
Եվ դամբարանից իրեն սգափայլ
Ղեկավարն է մեծ ելնում համբաքայլ:

Խջնում է դանդաղ նա հրապարակ,
Ուղղում է իրեն հագուստն հասարակ.
Քայլերը հաստատ քաղաք է ուղղում,
Քայլում է երկար նա մառախուղում,
Անցնում է բազում փողոց ու կամուրջ
Եվ շուրջն է նայում մտախոհ ու լուրջ:

Ոչոք մշուշում չի տեսնում նրան:—
Նա մուտք է գործում ամեն գործարան,
Ստուգում է լուռ ամեն պտուտակ,
Ամեն մի անիվ. և լեռնակուտակ
Մառախուղի մեջ քայլում է երկար,
Շոյում ամեն պատն ու ամեն մի քար:

Բարձրանում է նա ամեն մի հիմնարկ՝
Դորձերը նայում, անցնում հարկից հարկ—
Ամեն մի սենյակ, հանրակացարան,
Ամեն մի դպրոց, ամեն կայարան,
(Ուր գնացքներն են մշուշում փայլում),
Նայում է նրանց ու դարձյալ քայլում:

Բացվում են բոլոր դարպասները դուրս:
 Մտնում է աղառ ամեն զորանոց,
 Մտուգում է լուռ մինչև առավոտ
 Ամեն հրացան, ամեն թնդանոթ,
 Եվ երբ քաղաքն է նորից արթնանում
 Ժպտառում ու զոհ նա ետ է դառնում:

Պատվի են առնում սլահալները լուռ,
 Բացվում է դանդաղ երկաթյա մի դուռ,
 Ղեկավարն է Մեծ ահա սղափայլ
 Իր դամբարանը մանում համբարայլ:
 Ժամացույցն է հին կրեմլից դարկում—
 Մանում է դադաղ ու նորից պառկում:

Դառնում են այնժամ անխնայ թաղում,
 Բյուր ուղիներով դնացքն է վաղում,
 Զորանոցներում, հարկերում, հանքում
 Եվ ամենուրեք սլայքարն է թնդում,
 Որ զոհ լինի Նա այն ահեղ ժամին,
 Երբ շուրջն է լռում, լռում է քամին:

33 թ.

Չ Ե Ռ Ջ Ը

Լեւիցի առձանի մաս

Այնտեղ, ուր Բալթյան ջրերն են հոսում,
Ուր՝ երկինքն է մուխ խոնարհվել գետին,
Այնտեղ իր ձեռքը երկարած հեռուն՝
Կանգնած է նա իր կուռ զրահապաշտին:

Կանգնած է հալարա մարդը բլունդի բան
Եվ խոսում է դեռ անեղ զնգոցով.
Դեռ խոսում է նա.— լսում են նրան
Ահա հնադանդ՝ հող, երկինք ու ծով:

Ոտքերի ներքո, ջրերով իր ցուրտ,
Ռազմերդ է երգում դորշ ծովը արթուն,
Եվ ամպրոպներն են հլու ձայնակցում
Ծովափին կանգնած միայնակ մարդուն:

Մարդուն,—որ օտար ասիքի հանդես,
Որոնց ծովն է այս բարկացած լիզում,
Ոտքի է հանում բանականեր, գնդեր,
Վառում փոթորիկ ու բյուր ընդձգում.

Որ դեմնի վրա, ընդերքում խորունկ,
Ծովերում կապույտ, աշխարհում արար
Վարում է հիմա աշխարհաստան
Ծրրիկը քանդող և ըստեղծարար:

Նա, որ բրոնզակերտ ձեռքով աներեւ
Համայն աշխարհին արեն է ցուցում,
Որ հոկտեմբերյան մի անեղ պիշեր,
Ծագեց ու շողաց այս ծովածոցում:

Եվ դեմքը հառած ամերիկն օտար,
Բաղուկը պարզած հորիզոնն ի վեր,
Իր անեղ ձայնով հալարտ, անդադար,
Նեւում է նա դու մարտահրավեր:


Եվ երբ երևան հորիզոններից
Ռազմի նավերը մահաբոթ բոցով՝
Բրոնզակերտ ձեռքը կշարժի նորից,
Եվ կփոթորկվեն հող, երկինք ու ծով:

Կվառվեն այն ժամ երկու լուսարձակ,
Եվ զրահապատը՝ լույսերով դեղին,
Վրան բրոնզաձուլ մի հսկա արձան,
Ահեղաշառաչ կշարժվի տեղից:—

Եվ պարզած հեռուն ձեռքը հողմածեծ,
Հետևում գնդերն իր արևխրով՝
Մեզ կառաջնորդե դեկավարը Մեծ
Դեպի հաղթանակ և դեպի կռիվ:

33 թ.

Հայկերէն



Կ Ռ Վ Ի Ե Ր Գ

Թնդում է նորից փողը պղղնձի,
Դե դոփիր, դոփիր, սեպաշ իմ ձի:

Թըռիր որպես շանթ սըլացքով անան՝
Նորից դեպի մարտ, նորից դեպի մահ:

Թող կայծեր ցայտեն քո սմբակներից,
Թող շանթեր տեղան մեզ վերա վերից:

Թող վրադ բացեն հազար խոց ու վերք,
Թող քամին սուլի միշտ մահվան քայլերդ:

Թող մեր դեմ դուռն գետերը եռուն,
Դոփիր, իմ նոսր, ու թռիլ հեռուն:

Երբ մեր աշխարհից քշենք թշնամուն,
Նորից լնդուլթյամբ կդառնանք մենք առն:

Իսկ եթե ընկնեմ գնդակով դաժան,
Դարձյալ դու եղիր ընկեր անբաժան:

Եվ համբուրելով թաց աչքերը քո,
Թող մեռնեմ կարմիր դրոշի ներքո:

Թնդում է նորից փողը պղնձի,
Դե դոփիր, դոփիր, սեպաշ իմ ձի:

34 թ.



ՀԻՆ ԶԻՆՎՈՐԻ ՆԵՄԵԿԸ

Քո հին գլխովորից ողջուն, կոմիսար.
Արդեն լրացավ տասներկու տարին,
Բաժանում են մեզ այնքան գետ ու սար,
Բայց չեմ մոռացել իմ կոմիսարին:

Ու հաճախ, երբ ես մեքենայի մոտ
Նայում եմ դործովող ճերմակ կտավին,—
Տեսնում եմ իմ գետ դաշտերը ձյունոտ,
Ուր մենք կռվեցինք քսանևեկ թվին:

Քսանևեկ թվին... Ձյունապատ, անծիք
Դաշտերն եմ, նորից իմ առջև դիտում.—
Փոսի մեջ դրած մեկ հատ գնդացի՝
Կանգնած եմ ահա նորադավիթում:

Խալարն է իջնում ձյան հետ միասին,
Եվ պառկում եմ ես իմ նեղլիկ փոսում:
Անձայր տափարակ, ոչ աստղ, ոչ լուսին,
Քնարեր քամի, ծանրը սպասում:

Եվ ասես գետնից՝ թռչում է հանկարծ
Թշնամին հեծյալ ու դոփում արագ:
Խուճապ ու նահանջ: Ես փոսում պառկած
Իմ գնդացիներից բացում եմ կրակ:

Ճարճաւածում է նա: Պարզ լսում եմ ես
Ձոր սմբակներէ դոփշունը վերջին,
Փախչում են նրանք, իսկ մերոնք անտես
Հասել են արդեն դշուղի կամրջին:

Գնդացիւրն առած և խնայալասար
Մարա աւլով բուքին սողում եմ մինչ ծեղ.—
Ա՛խ, այդ գիշերը, ընկեր կոմիտար,
Հուշերէս միջից չի ջնջիլի երբեք:

Այդ օրից երկար ամիսներ անցան,
Մենք մարտեր տեսանք ավելի դաժան,
Ես բերի ինձ հետ մի հին հրացան
Եվ կրծքիս՝ կարմիր մի շքանշան:

Ես գնաքս թողի, բայց միւսնույն սիրով
Իմ գործվածքային դադգահն եմ վարում.
Յանկանում եմ ես լինել լավ զինվոր,
Թեև այլ գնաքով, այս նոր պայքարում:

Բայց երբ պետք լինեմ՝ ետ կգամ նորից,
Ես չեմ մոռացել գնդացիւրն անդին:
Ողջո՛ւյն, կոմիտար, քո հին զինվորից,
Որ պատրաստ է քո նոր հրահանգին:

35 թ.

ԵՐԳ ԶԻՆՎՈՐԻ ԿՈՇԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նա աաղմի դաշտից իր տունն էր դառնում...
Ոտքին զինվորի կոշիկներ կային,
Այդ կոշիկներով նա Դոնն էր անցել,
Դրանցով էր նա հասել Վոլգային:

Այդ կոշիկներով նահանջել էր նա,
Ապա դրոհել մերկ սուրը ձեռին,
Դրանցով էր նա ճգնել անխնա
Ներում աղերսող թշնամիներին:

Այդ կոշիկներով նա անվերջ դուրել,
Անցել էր փառքի ուղիներն անանց...
Եվ իր ոտքերից նա չէր թռթափել
Դեռ աաղմի փոշին, - երբ նորից դնաց:

Ուր է նա հիմա, երկրի մը մասում, —
Ես այդ չգիտեմ, բայց ահա նորից
Այն կոշիկների դուրյունն եմ լսում
Ես իմ աշխարհի բոլոր կողմերից:

Լսում եմ նրանց դուրյունը ծանոթ
Դոնի ափերին, Ռեուում հեռու,
Ահա կովկասի լեռներում ձյունոտ,
Սաալինդրադի մոտ և մատույցներում:

Մեր քաղաքներս, դյուղերով կործան
Դովում են միլիոն ու միլիոն ոտքեր.
— Ողջուն, գրոհի ահեղ ոտնաձայն,
Ողջուն, հարձակվող իմ հերոս ընկեր:

Փլչում են ձյունոտ կռիկներով ապկ
Փախչող թշնամու որջերը լախում,
Եվ մեր վրեժի օղկիանն անհատակ
Ճամփա է բացում դեպի Արևմուտ:

Քո ոտնաձայնից աշխարհն է դողում,
Յնժում են աղատ քաղաքներն ավեր,
Եվ նրանց վրա նորից են ծիւղում
Մարտերում օձված դրոշները մեր:

Եվ կռիկներով քո այդ հասարակ,
Որ դուցե հենց քո եղբայրն է կարել,
Քայլում ես, ընկեր, դեպի հաղթանակ,
Եվ դու չգիտես թշնամուն ներել:

Դովիր, իմ ընկեր, և լա՛վ իմացիր,
Այնժամ կալաբա՛ղի քո փառքի ուղին,
Երբ կռիկներդ դոփեն ահարկու
Եվ դիպչեն նաև Բեռլինի հողին:

43 Բ.

Կ Տ Ա Կ

Թե կուլի դաշտից չդառնամ ես առն՝
 իմ քնարն առեք և սուր ձուլեցեք,
 Այդ սուրը տվեք իմ պաղծիկ սրդուն
 Եվ ապա նրան այսպես ասացեք.—

—Քանի հայրենի լեռներում մեր սեզ,
 Մեր հովիտներում դեռ կա մի ոսոխ՝
 Պատյան չդնես սուրդ արնաների,
 Որ քո հոր ձեռքին քնար էր խոսող:

Եվ երբ որ հաղթած նա առն գա,—կրկին
 Քնար ձուլեցեք սրից արյունոտ,
 Դրեք Արաղած լեռան գաղաթին.
 Ամսերի դրկում, կայծակների ճգատ:

Եվ թող դան հողմեր բոլոր կողմերից,
 Թող դան ու շարժեն լարերը թյն մռնչի,
 Որ դու, Հայաստան, նորից աւ նորից
 Լսես լրեժի երգը հողմաշունչ:

43 թ.

ԼԵՆԻՆԳՐԱԴԻՆ

Природой здесь нам суждено
В Европу прорубить окно...

А. Пушкин

Քո դանդաղաներ պոկելի պես
Քեզ եմ դիմում, մենք քաղաք,
— Ինչպես որդի սիրում եմ քեզ,
Քո առօրյան բազմադադակ:

Սիրում եմ ես հայացքդ խիստ՝
Թաղված մոլորում և ամպերում,
Եվ օրերում այս անհանգիստ
Քեզ եմ կրկին մտաբերում.—

Ահա նեվան... Սառն ու շողուն,
Ծանրը, ինչպես հալած կապար,
Կես գիշերվա մառախուղում
Փռված է նա արքայաբար:

Փռված է լայն ու անշրջուկ,
Իսկ ջրերում ցոլում են ծույլ
Ապրանքներն անհեղաշուք
Ու կամուրջներն երկաթածույլ:

Ահա նորից հողմն է խփվում
Գրանիտե ողորկ ափին,
Ուր ծեր առյուծն է մրափում՝
Դունչը դրած քարե թաթին:

Ահա կանգնած որպէս սոսկում՝
Մռթ աչքերով հարյուրամիւր
Գորշ ջրերի նինջն է հսկում
Պետրոսական բերդն ահա՛մոր։

Իսկ բերդի դեմ այդ դժնդակ,
Պատվանդանի վրա ահեղ
Ոստնում է դեռ քառամբակ
Պետրոս Մեծի ձին խելահեղ։

Ահա շքեղ պողոտաներ
Եվ կամարներ դեղաքանդակ,
Մարմարակերտ հսկա սյուներ՝
Կըքած նրանց ծանրության տակ։

Տեսնում եմ ես Սմոլնին ահա —
Հոկտեմբերի շտաբը մեծ,
Որտեղ Լենինն ահեղածայն
Մեր արշալոյսն աղբարարեց։

Այստեղ էր նա իր գնդերին
Զինում անվերջ, կովի մղում,
Որ արեգակն Հոկտեմբերի
Շողա քո ցուրտ մառախուղում, —

Որ հարեան Նվրոպային
Դժու տաս արդեն լույսդ վարար,
Որ միշտ շողան ծովեզերքին
Արշալոյսներիդ փրկարար։

Եվ շողացիր որպէս փարոս,
Դարձար և՛ լույս, և՛ լուսամուտ,
Իսկ թշնամին մեր բարբարոս
Նայում էր քեզ դարանամուտ։

Եվ այժմ եկել պատերիդ տակ
Ձոքել է նա քենով անհուն,
Որ կործանի հիմնահատակ
Քաղաքների դեղեցկուհուն:

Եկել է, որ մոխիր ցանի
Մաքի, լույսի այս ոստանում,
Որի հողում մեր հանճարեղ
Նախնիներն են հանգստանում:

Եկել է, որ բիրտ սմբակով
Սուրբ չիբիմները անարդի
Եվ մարդկության բախտի դիմաց
Մեր լուսամուտն ամուր փակի:

Ձի հաջողվի... Ձուր չէր որ քեզ
Անմահ Լենինն այնքան սիրեց,
Եվ Ստալինը՝ իդուր չէ, որ
Նրա անվամբ քեզ մեծացրեց:

Ահեղագոչ երգվել է նա՝
Այն բոցաշունչ կոլեկտիվին,
Որ ոչ մի ձեռք չի մոտենա
Հոկտեմբերի օրորոցին:

Եվ հիմա բյուր թնդանոթներ
Քո չորս բոլոր, ծովում, օդում,
Առաջնորդի ահեղ երդման
Բոց բառերով են որոտում:

Քո կառուցման ահեղ օրից
Դեռ չի հաղթել քեզ թշնամիդ,
Եվ քո նախկին թափով նորից
Կոմունիստ դու մեծաշունդ:

Կաժուժ ես դու, և այդ պահին
Ֆինլանդական կայսրանուժ,
Կանգնած իր կուռ դրահապատին՝
Լենինն է քեզ հսկարտ նայում:

Եվ այդ պահին քեզ հետ մեկտեղ,
Զուլված սաղմի ծուխ ու բոցին,
Ոստնում է նա — անսլարուելի
Պետրոս Մեծի անհանդիստ ձին:

42 թ.

ԼԵՆԻՆԻ ՔԱՂԱՔԻՆ

Ճեղքվեց Լենինգրադի բոկադան
(Թերթերից)

Ինչպես հորդաւատ Վոլխովսկ ու Նևան՝
Իրար միացան բանակներն երկու,
Եվ ճեղքվեց նրանց թափի հանդիման
Քեզ շրջապատող պարիսպն ահարկու,
Այն պարիսպն ամուր, որ ինչպես կրակ,
Ինչպես շառաչող լիթիսարի մի օձ,
Փաթաթվել էր քեզ, հողմերի քաղաք,
Քեզ—Հոկտեմբերի անեղ օրորոց:

Կայծակի նման փայլատակելով
Մեր սուրը կրկին հարվածեց օձին,
Բացվեց քո ճամփան, և քեզ նայելով
Հիշում եմ նորից ես Պետրոս Մեծին,
Որ պատվանդանի ժայռից անխորտակ
Սովառնում է դեռ քո մառախուղում,
Որի նժույգի սմբակներն տակ
Մեջտեղից կխաղած վիշապն է սողում...

Քաջիկից քո ճամփան... Ինչպես մի առյուծ,
 Որ չի ճանաչել փականք ու դանդաղ,
 Որ չի հազեցնում զրեծ լուծելուց,
 Ոստնում ես թափոյ ամենախորտակ:
 Եվ ահա նորից մըրթիկ է ու հողմ,
 Շանթեր են թռչում Բալթյան ափերից.
 — Սասանիկիւր, Բեռլին, և ցնցիկիւր, Հոռմ,
 Լենինգրադն է այդ շարժում իր տեղից:

43 թ.

Մ Ո Ս Կ Վ Ա

Մ', Մոսկվա, Մոսկվա... Դարեր ու դարեր,
 Կանգնած հողմերում աշխարհաշառաչ,
 Դլուխդ երբեք դու չես խոնարհել
 Դեռ ոչ մի գոռոզ թշնամու առաջ:
 Ծնկի չբերեց Բոնապարտն էլ քեզ,
 Նա, որ սասանեց ցամաքներ ու ծով,
 Դու հրդեհ դարձար, դարձար ողջակեզ,
 Հաղթեցիր նրան զայրույթիդ բոցով:

Փախա՞ղ նա մոլոր, և աքսորյալի
 Շղթան մաշելով հեռավոր կողում,
 Նա, որ չէր լսում շառաչն օվկիանի,
 Դեռ քո զանգերի դողանջն էր լսում,
 Թվում էր նրան, թե տեսնում է դեռ
 Ծուխը հրեմլի, սյուները քո վառ,
 Որ դարձան թաղման ահավոր ջահեր
 Իր փառքի համար, իր գահի համար:

Եվ խոր դղջումով հիշում էր կրկին
 Քեզ, մեր սուրբ քաղաք, քեզ—սլայծառ անուն,
 Որ անսլարտ, ինչպես ուռածական ողին,
 Կանգնած էիր ցուրտ քո հեռաստանում..
 Ձեռքերը խաչած մաածում էր նա.—
 —Կանցնեն շատ դարեր և ոչ մի հիմար
 Ահեղ Մոսկվային էլ չի մոտենա,
 Շիրիմ չի փորի ինքն իրեն համար:

Բայց նա սխալվեց: Տարիներ անցան
Այն օրից, երբ դու ծուխ ու բոց հագար,
Եվ ահա քենով աշխարհակործան
Ծնվեց Աթթիլի թուր խելագար,
Եվ նա ցանկացավ ելնել—նմանվել
Քո հրից փախած ոստնոդ առյուծին,—
Մի խեղճ կառվի ձագ, որից առավել
Խելոք էր փախչող Բոնապարտի ձին:

Իր ուխտը դրժած, ծաղրով անամոթ,
Նա եկավ որսւեռ չարադեռ մի ամս,
Նա բերեց իր հետ շանթեր ու որոտ՝
Քեզ տիրանալու անմիտ ցանկությամբ:
Ցանկանում էր նա, մեր մայր, մեր երջող,
Որ քո ոտքերիդ շղթաներ կրես,
Քոռոզ Բեռլինին աղախին դառնաս
Եվ կամ զայրութից քեզ կրկին տյրես:

Մոռացել էր նա, որ հենց նույն տեղում,
Ուր Բոնապարտն էր կանգնել դվսահալ,
Լենինի կամքով ապրում է, շողում
Մի ուրիշ Մոսկվա, մի ուրիշ քաղաք,
Որ մեր աշխարհի քաղաքներն ամեն
Քեզ են խոնարհվում արդեն քառորդ դար,
Քեզ—ազատության դրոշ հրեղեն,
Քեզ—երջանկության լուսեղեն կատար:

Մոռացել էր նա, այդ անարդ հողին,
Որ քո երկնի տակ Լենինն է ննջում,
Որ նա չի մեռել և այժմ էլ կրկին
Երևում է մեզ Կրեմլի դահլիճում,
Կանգնում է այն սուրբ դամբանի վրա,
Երբ մեր դնդերն են անցնում զնդոցով,
Իր ձեռքն է պարզում, և միշտ հնադանդ—
Պապանձովում են լուռ հող, երկինք ու ծով:

Կենդանի է նա և Կիսա Նրա՛ն—
Մտալի՜ն ե՛նք կոչում: Այ՛ն ասե՛նք ժամի՛ն
Նրա ետեից մեր գնդերն ելան
Քեզ պաշտպանելու: Երբ նենգ թշնամին
Մոտեցել և քեզ իրենն էր կարծում,
Նա ձեռքը շարժեց. մըրիկ որոտաց.
Եվ անողորմ այն հուր ու բոցում
Հին Բորողինոն լոկ կատակ թվաց:

Որպես քո երկրի բաշը զիթխարի՝
Դու մոնչացիր, հաղթեցիր ու կան
Բայց մարմինդ էին ուզում հոշոտել
Նեվայից մինչ Դոն, Դոնից մինչ Կովկաս:
Ծովերից մինչ ծով, եզերքից եզերք,
Դեռ բոց էր ու ծուխ, դեռ մահ ու որոտ,
Եվ շաչում էին սրերն արնաներկ
Իմ հայրենիքի դարպասների մոտ...

Եվ դու խեղդելով կսկիծը քո խոր,
Կանգնեցիր նորից ռազմի շառաչում,
Վրեժ գոչեցին զանգերդ բոլոր,
Քո բուրգերն էին մեզ մարտի կոչում,
Եվ ասում էիր.—մայրեր ու քույրեր,
Վրեժ լուծեցեք փոխանակ լալու,
Շուտով կըրեմլի ժամացույցը մեծ
Հատուցման անեղ ժամն է զարկելու:

Եվ ժամը հասավ... Ռաքերիդ առջև
Ընկավ ծնկաչոք Բեռլինը կործան.
Եվ դու կանգնած ես սեզ ու անհողդողդ՝
Որպես մեր փառքի անխախտ հուշարձան:
Որպես փրկության փարոս լուսավոր,
Շողում ես նորից քո հեռաստանում,
Եվ ինչպես առաջ՝ աշխարհի բոլոր
Ճանապարհները Մոսկվա են տանում...

ՂՐԻՄԻ ՎԵՐԳԵՐԸ

Օ՛, չորացած կարմիր վարդեր...
Սիրով եմ այդ փունջը պահում,
Եվ նա քնքուշ բուրում է դեռ
Հախճապակե ծաղկամանում:

Բուրում է դեռ, և ամեն օր
Շնչելով բույրն այդ մտերիմ,
Քեզ եմ հիշում, իմ հեռավոր,
Իմ վարդաշատ չքնաղ Ղրիմ:

Ծովը եմ հիշում արևաներկ,
Ափերը քո դեղանկար,
Ուր խամրեցին թե՛ վարդ, թե՛ երգ,
Ո՛ւր արնոտվեց ամեն մի քար:

Քեզ եմ հիշում, պայծառ Սուդակ,
Ձեզ—նոճիներ իմ նազելի,
Իլ չեն հնչում ձեր շուքի տակ
Թախծոտ «Հեջաղն» ու «Էնդելին»:

Ի՞նչ եք խորհում դուք ծովափին՝
Կանգնած մենակ ու հողմածեծ...
Ո՛ւր է, տսեք, ձևքն այն նրբին,
Որ այս վարդերն ինձ նվիրեց:

Ղըլիմ, Ղըլիմ, դու իմ սրտում
Պիտի ապրես քանի ևս կամ,
Եվ վարդերիդ միջից տրտում
Դու կնայես ամեն անգամ:

Ինձ կնայես, մինչև կրկին,
Գնդերի հետ ազատարեր,
Կանգնեմ ժայռոտ քո եղերքին,
Ասեմ—ողջո՛ւյն, չքնանա ամիսը:

Եվ մենք կգանք, կգանք, Ղըլիմ,—
Մոտ է այն օրն արևալուր,
Երբ կրուրեն իմ սեղանին
Վարդերդ թաղմ, վարդերդ նոր:

42 թ.

ՀԻՄՆ՝ ԵՆ ԼՈՒԵՆՔ...

Ռ. Պատկանյան

Այդ հարցն էր կրկնում բանաստեղծը մեծ,
Նրբ մեղ հանձնեցին հրի ու սրի.
Բայց ես չեմ կրկնի, քանի որ գիտեմ՝
Մենք դեռ չենք լուր և չենք էլ լուր:

Բայց եթե դողա քո ձեռքը մի օր,
Նիլ դու խնայես թշնամուն մեր նենդ՝
Ես նույնիսկ շիրմից կգոչեմ այնժամ—
—Այդ ի՞նչ ես անում, հիմի՞ էլ ներենք:

43 թ.

ԶԱՀՎԱԾ ԸՆԿԵՐԱԶՍ

Դու ընկաւր, Սէլն, բայց չեմ իմանում
Որտե՞ղ է հանգչում քո սիրտը հասակ,
Ո՞ր եղբայրական ցուրտ գերեզմանում,
Ո՞ր ճամփի եղբին, կամ ո՞ր ծառի տակ...

Բայց ո՛ւր էլ լինես՝ կգտնեմ ես քեզ,
Իմ ազնիւ ընկեր, իմ լաւ բարեկամ,
Կիտրում շիրմիդ թափառ ամպի պես,
Հոգնած ամպի պես ես կհեկեկամ:

Կպատմեմ ես քեզ, թե ինչպես մեզ մոտ—
Մեր Նրեանում ծառերն են ծաղկում,
Ինչպես է շողում բարդին արևոտ
Մեր կանաչ Նորքում, քո սիրած Նորքում...

Իսկ հիմա, ների՛ր, իմ սիրտն է սառած,
Արցունքներ չկան և չեմ լալիս դեռ.
Լալու փոխարեն իմ քնարն առած
Քո ոխն եմ երգում, իմ ազնիւ ընկեր:

Եվ փառքն եմ երգում ես ընկածների,
Կռվողի սրտում վրեժ բորբոքում,
Որ Նրեանում միշտ գարննն լինի,
Միշտ անքն լինի քո սիրած Նորքում...

43 թ.

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Ճաղաղ մի օր կրկին կգանք,
Կհալաքվենք այս սենյակում,
Կրկին թասեր կղըրնդան
Մեր սեղանին ու մեր հողում.
Թողած վեճերն հին օրերի,
Կղրուցենք սիրով այնքան,
Եվ դինու հետ կփրփրի
Խնձույքը մեր պոետական:

Եվ նախին կերդի այնօր
«Մոկաց Միրզան» իրա սիրած,
Կարտասանի պոեմն իր նոր՝
Ճաղաղության մասին գրած.
Ապա Գեոն մեր լեզվանի
Կասի համով մի խոսք, մի բառ,
Եվ կթնդան տուն ու տանիք
Գեռ ծիծաղից մեր անսպառ:

Բայց կմարի ծիծաղն հանկարծ, —
Եվ կլսենք երկնք, երկնք,
Մեր սրտերին կծանրանա
Թախիծն ինչպես ճնշող մի քար...
Յղդանք, որ մեր սեղանի շուրջ
Պակաս է մեկն իրեն տեղում,
Նա, — որ այնքան խորունկ էր, լուրջ,
Որ այնքան լավ էր ծիծաղում...

Եւ ի կոտորածի սենյակը ատիժ
Շուռնչը մահովտն՝ դժնի ու սառ,
Մեղ ինայի ժպտով ծանոթ
Մեր ընկերոջ դեմքը պայծառ
— Ինչո՞ւ եք լուռ, — կասի նա մեղ, —
Անցան օրերն այն արնաների,
Ես դահլեցի, որ մշտապես
Դուք ծիծաղեք, որ չլուք...

Բայց չի հնչի էլ զրբնգուն
Ծիծաղը մեր, երգը լուռ,
Նույնիսկ «անդարդ» Գևորգ թաքուն
Կըտըրորի աչքերը թաց:
Իսկ ես ելած իմ աթոռից՝
Կառնեմ խոսուն քնարն իմ այս,
Որ քս վրեժն երգեմ նորից,
Իմ լավ ընկեր, որ էլ չկաս...

44 թ.

ԵՂԵՎՆԻՆԵՐԷ

Եղեւիններ իմ դալար,
Եղեւիններ իմ տրտում,
Ի՞նչ եք խորհում հողմահար՝
Ձյուների մեջ ու ցրտում:

— Կանգնած Գոնի եղերքին,
Կանգնած հեռու հյուսիսում,
Նայում ե՞նք մե՞նք ճամփեքին
Եվ ձեր գալուն սպասում:

Սպասում ե՞նք ահա մե՞նք,
Որ դուք հաղթեք, նորից գաք,
Որ մե՞նք կրկին դարդարե՞նք
Ամեն դահլիճ ու սենյակ:

Որ առաջվա մեր շուքով
Մե՞նք ողջունենք նոր տարուն
Եվ ձեղ պատմենք շշուկով՝
Ինչ որ տեսանք անտառում.

Որ մե՞նք տեսանք այդ ժամին
Կանգնած տաքուկ սենյակում,
Թե ինչպես էր թշնամին
Այս սուրբ հողը անարդում

Ինչպես արյամբ ներկեցին
Անտառի ձյունն քապիտակ,
Թե քանիսին թաղեցին
Ամեն մեկին բնի տակ.

Որ մենք պատմենք, թե ինչպես
Թեժ խարույկի բոցի մոտ
Պարտիզանն էր հիշում ձեզ
Սրում սվինն արյունոտ:

Պիտի պատմենք դեռ ինչե՛ր
Մանուկներին ու մեծին,
Դրա համար անհամբեր
Սպասում ենք ձեր դարձին...

— Եղենիներ իմ դալար,
Եղենիներ իմ տրտում,
Քիչ էլ կացեք հողմահար
Ջրունների մեջ ու ցրտում:

Լսում եք դուք, մենք ահա
Հեռու չենք ձեր սուրբ հողից,
Եվ սրտից մոտակա
Ջրուն է թափվում ձեր ճյուղից:

Քիչ էլ, քիչ էլ սպասեք,
Եղենիներ իմ գերի,
Եվ մենք կդանք ու կասենք—
— Շնորհավոր նոր տարի:

42 — 43 թ.թ.

Ե Ղ Ե Վ Ն Ի Ն

Հեռաստանում ձյունեղեն,—մեր աշխարհի լուսնի ստեղծ,
Կանգնած է մի եղենի՝ ուրիշ գլուխ սպիտակ,
Նայում է նա ճամփեքին, քամու հեքիաթն է լսում
Մյն հեռավոր անտառում և իմ մանկան երազում...

Մանուկների երազում և անտառում անխառն
Նա կղուգվի այս գիշեր կախարդական աստղերով,
Եվ երբ օրը լուսանա—թողած ձյուներն անատուի—
Կգա նա տուն, կրեքի նոր երազներ, նոր սարի:

Կգա հրաշք եղենին, մեր եղենին գեղեցիկ,
Մեր եղենին, որին մենք կռվի սլահին փրկեցինք,
Որի բնին՝ արյունոտ ովիններով զինվորի
Մենք մի գիշեր գրեցինք—«Շնորհավոր նոր սարի»...

44—45 [Թ.Թ.]

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»

Մեր վաստակով, հայրենիք, որ բերում ենք քեզ նվեր,
Սաղառնակներ դու ձուլիր, երկաթաթե բազկներ,
Եվ թող նրանք շառաչով անցնեն դաշտ ու լեռնաստան՝
Իրենց թևին երկու բառ—«Սովետական Հայաստան»:

Թող սլանան ազմի դաշտ, միանան մեծ երամին,
Մեր վրեժի ուժերով նետվեն դեպի թշնամին,
Եվ թող նրա գլխին միշտ որպես ամպրոպ որոտան
Բմբոսա ճախրող երկու բառ—«Սովետական Հայաստան»:

Թող թռչուններն երկաթե հայ հերոսին երևան՝
Որպես հայոց աշխարհի կարոտարեր մի երամ...
Եվ քաղաքներն ազատված ամպերի մեջ թող կարդան
Հայտնա ճախրող երկու բառ—«Սովետական Հայաստան»:

Սաղառնակներ թող ձուլվեն մեր խանդավառ նվերով,
Եվ նրանց պիրիլ թևերին քո անունը դրելով՝
Թափը դեպի հաղթանակ, անցիր դաշտ ու լեռնաստան,
Իմ թևովոր հայրենիք, Սովետական Հայաստան:

Ա Ր Տ Ե Ր Ը

Խշշուժ կ'ն ահա հովից տարուեր
Արտերը դեղին արևի բոցում,
— Ո՞վ է ձեզ զանել, հայրենի արաբ,
Եվ ո՞վ է հիմա ձեր բերքը հնձում:

Գնացին նրանք, ուրբեր ցանեցին
Ակոսները ձեր, դնացին նրանք,
Որ ձեռք չսլարդի ոչոք ձեր հացին,
Որ, ոսկե հասկեր, դուք մերը մնաք:

Մենք ենք ձեզ հնձում նրանց փոխարեն...
Թե մենք էլ դնանք և դան ուրիշներ՝
Հիշեցեք և մեզ ու հավերժորեն
Ծփացե՛ք, արտեր, հայրենի արտեր:

43 թ.

Պ Ը Ր Ժ Ը Ն Ք

Գեներալ-մայոր Սարգիս Մարտիրոսյանին

Հալարտ են շողում հայոց երկնքում
Մեր լեռներն անհաս, որ քեզ ծնեցին,
Քեզ ուղիղահան հողմերն են երգում,
Որ քո նժույգով խարկով սուրացին:

Քո փառքն են երգում ստեպներն արձակ,
Քեզ է ողջունում մեր խարկովն ազատ,
Սլացի՛ր, հայոց լեռների կայծակ,
Քեզ է սպասում Կիևն ալեղարդ:

Խեղդիլ թշնամուն ծովում իր արյան,
Եվ երբ որ մանես մայր քաղաքն այդ հին,—
Քեզ կօրհնեն շիրմից մեր բազմադարյան
Եվ հավերժ տանջված Դվինն ու Անին:

Հալարտ կնայեն արար աշխարհին
Քեզ ծնող լեռներն հայոց երկնքում,
Քո փառքը կապը՛ն նրանց կատարին
Եվ ուղիղահան հողմերի երգում:

ԱՄ Խ.

ԲԵՌԼԻՆՆ Է ՊԱՐՏՎԱԾ...

Բեռլինն է պարտված... փանք ձեզ, հողմածեծ
Հաղթության դրոշ և սաղմի որոտ,
Եվ փանք մեր սրին, որ վաք գլորեց
Պիղծ Գերմանիայի գլուխն արյունոտ:

Ցնծացեք կրկին, ցնծացեք հավետ,
Մայրաքաղաքներ կանգուն ու քանդված
Նա, որ ձեզ բերեց կսկիծ ու աղետ,—
Մոսկվայի առջև չոքել է պարտված:

Արդ վառվում է նա իր մեղքի հրում,
Վառվում է որպես կաթաղեն մի նոր,—
Որ ընդմիջա հանդէ՛լ արար տշխարհում
Ամենակործան հրդեհն ահավոր:

Ցնծացեք, հաղթող Բեռլինյան գնդեր,
Որոտա՛, սաղմի անսղոք առաված,
Եվ թող դարերն էլ որոտան քեզ հետ—
—Բեռլինն է պարտված, Բեռլինն է պարտված:

45 թ. մայիսի 2—3

ԴՅՈՒՑԱԶՆԱԿԱՆ

Հայ հերոսներին

Երազ տեսա:—Մեր Դավթի հետ
Նստած էինք մինչ առաջոտ,
Հետո առանք աղեղ ու նետ,
Նժույդ հեծանք արագալուտ:

Ելանք հայոց լեռները սեզ,
Անցանք մթին կիրճերն հայոց.
Մահ էր այնտեղ ամենուրեք,
Մահ էր այնտեղ, արյուն ու բոց:

—Հապա մի տես,—Դավթին ասաց,—
Նորից Մարա զորքն է եկել,
Ուղում է նա մեր հողը սուրբ
Նորից պղծել ու անարդել:

Տանում է նա մեր մայրերին,
Աղջիկներին մեր արմաղան,
Որ ջուր լցնեն նրանց ձեռին,
Որ ուրիշի երկանքն աղան:

Գնում եմ ես, մահա բարոժ,
Վրեժն առնեմ իմ աշխարհի.
Գնում եմ ես հազար տարոժ,
Չեմ երևա հազար տարի:

Քայց թե հաղար թաւին տնցալ,
Ու էլ Դավիթը չերեաց՝
Քիտցիր՝ իմ տեղ աշխարհ կէան
Թուներն իմ քաջ ինձնից սերած:

Ասաց ու ձին աստանդակեց,
Լեռներ ու ձոր դղրդացին,
Արար աշխարհ փռշտամ թաղիկեց,
Կարան փռշտամ Դավիթն ու ձին:

Երազն տնցալ... Հիմա երբ ձեր
Փառքն է թնդում—ասում եմ ես—
Ահա սրով կայծակնաձե
Դավթի թուներն եկան հանդես:

Նկել են ու հաղարանուն
Քաջերի հետ ամեն աղղի
Յույց են աալիս նենդ թշնամուն
Թափը հայոց արդար բազկի:

Յույց են աալիս, որ վառ է դեռ
Անալարտ ողին մեր հայկազուն,
Եվ այս կովում հնչում է մեր
Հաղարամյա ըմբոստ լեզուն—

Եվ այդ լեզվով որոտացինք—
—Կանգնիր, դու նոր Մորա-Մելիք,
Չես հասնի դու Արագածին,
Մեր Սեանին չնաշխարհիկ:

Եղ սե ծովից մինչ Մառցե ծով,
Կաղրեկից մինչ Չուղը հեռու
Շողում է դեռ շանդոցով
Սուրը նրանց լրիժառու:

Ու քանի այն հրեշը նենդ
Դեռ չի փչել իր սե հողին՝
Նրանք պառլան չեն դնելու
Դավթի թողած Թաւ-Կայծակին:

42 Թ.

ՍԳՆ՝ ԳԵՐՄԱՆԻԱ

Անալինգրադի մոտ ոչնչացված
գերմանական բանակի համար
Գերմանիայում երկու օր սուգ է
հայհաբուրվել:

(Թերթերից)

Հասա՞վ ի՞նչ քաղաքս այն օրը անեղ,
Երբ դահիճն անդամ թափեց արտասուք.
— Սգան, Գերմանիա, սգալ սո՛վորիւր,
Շատ ես տեսներու դեռ շշուկը և սուգ:

Սգան, Գերմանիա, և մի մոռացիւր
Մեր Ստալինգրադի ստեղծներն անծայր,
Այնտեղ էր, որ դու փառքդ թաղեցիւր,
Այնտեղ էր, որ դու սգալոր դարձար:

Այդ ստեղծների ձյան տակ է փառում
Բանակը զո մեծ— զոհը մեր սրի,
Չկա, Գերմանիա, ամբողջ աշխարհում
Ո՛չ մի գերեզման այդքան լիթթալի:

Սգա, Գերմանիա, դու զո մարշալին,
Գեներալներին՝ ներում աղաչող,
Սգան դու նրանց, որոնք խաբվեցին
Քո կոպեկանոց երկաթե խաչով:

Սգան և կախիր դրոշներ սգո,
Ծածկէր դրանցով զկշտդ պարառթյան...
Բայց մի ծալիւր սև դրոշները քո,
Գերմանիա, դրանք դեռ քեզ պետք կդան:

Գերմանիա, դրանք դեռ քեզ պետք կդան
Շուտով, շատ շուտով, երբ կընկնես անթև,
Թող այն ժամանակ քո մահը սգան
Գոնե քո կախած դրոշները սև:

ՄԵՐ ԴՈՆՆ Է ԸՁԵՏ...

Շառաչի՛ր, քննար, և ձայնդ խառնի՛ր
Թնդանոթների հաղթական երգին.
— Փշրելով արնոտ կապանքներն իր՝
Յնծուժ է աղատ մեր Դոնը կրկին:

Պարզելով մեր սուրբ դրոշը վառման՝
Ռոստոմն է աղատ, և Դոնն է աղատ.
Ձեր հերթն է դալիս, Դնեդը և Նեման,—
Մեր խաղաղ Դոնի քույրեր հարազատ:

Մենք հիշում ենք ձեզ... Եվ շուտով, շուտով
Նրանք, որ Դոնին փրկություն բերին,
Թնդանոթների ցասկոտ ոբոսով
Կկանգնեն և ձեր արնոտ ափերին:

Դեռ կգան նրանք որպես սուրբ վրեժ,
Ձեզ աղատ Դոնից ողջուն կրեւեն,
Ձեր ցուրտ ջրերում կթաղեն համբերժ
Լսիր՝ թշնամու շղթան անօրեն:

Եվ ձեր ափերին քաղաքներն ամեն,
Ու դյուղերն ամեն կրկին կժողաան,
Եվ այն ժամանակ թող ձեր փոխարեն
Պղտորվեն հուղված Օդերն ու Էլբան...

Իսկ հիմա, քննար, քո ձայնը խառնի՛ր
Թնդանոթների հաղթական երգին.—
— Փշրելով արնոտ կապանքներն իր՝
Ռոստոմն է ցնծում Դոնի հետ կրկին:

Դ Ե Պ Ի Բ Ե Ռ Լ Ի Ն

Լսո՞ւմ եք, դետեր, հայրենի դետեր,
Լսո՞ւմ եք դովիշուհն աշխարհաստան,
Սուրալով որպես հողմարաց շանթեր՝
Դո՞նի նժույգներն Օդերին հասան:

Թող ցնծա Վոլգան—գթու մայրը ձեր,
Շուտով թշնամի շատ գետ ու վտակ
Կսողան ինչպես ջախջախված օձեր
Մեր նժույգների սմբակներին տակ:

Եվ շուտով շուտով կհասնենք այնտեղ,
Ուր դորշ Շալրեի փրփուլն է եսում,—
Որ պիղծ Բեռլինի պիղծ արյամբ ներկած
Մեր սուրբ լվանք նրա ջրերում,—

Որ այնուհետև էլ չպղտորվեն,
Հայրենի դետեր, ջրերը ձեր սեզ,
Որ ազատ մնաք ու հավերժորեն
Դեպ խաղաղության ծովերը հոսեք:

ՅԷԷ Թ.

Ն Ր Գ Ը

Կար մի հայ զինվոր մեր զորամասում,
 Նա գիտեր չքնաղ մի երգ հայրենի,
 Այդ տխուր երգում Արաքսն էր հոսում,
 Սոսափն էր լսվում մեր բարդիների:

Հայրենի մեր տան ծուխն էր ոլորվում
 Այդ թախծոտ երգի հնչյուններում պարզ,
 Եվ թվում էր մեզ, թե կասլույտ հեռվում
 Տեսնում ենք նորից մեր լեռներն անհաս:

Մենք լսում էինք այդ երգը ծանոթ
 Թերեքի տիփն, նահանջից հողնած,
 Եվ խորհում էինք խարույկների մոտ՝
 Մեր նժույգների բաշերը գրկած:

Եվ մեզ չէր նեղում բուքը շառաչող,
 Մենք չէինք մրսում հողմ ու ձյունի մեջ,
 Զերմ էր մեր հողին այդ երգի շնչով,
 Հայրենի մեր տան կարոտով անշեջ:

Մենք լսում էինք այդ երգը կրկին
 Հարձակման ահեղ օրերի բոցում,
 Վրեժով էր նա վառում մեր հողին,
 Եվ սուրն առափել թափով էր խոցում:

Եվ մղում էր մեզ եղերքից եղերք
 Ն'րդը մտերիմ, երգը սրտակից...
 Բայց մի օր սաղմի դաշտում արնաներկ
 Ընկավ երգիչը մի կույր գնդակից:

Ընկալի նա պղտոր Դանուբի ափին,
Այնտեղ էլ թողինք շիրիմն հերոսի,
Որ նա իր սիրած Արաքսից հեռու՝
Իր փրկած դեռի շշուռնը լսի:

Թաղեցինք նրան և անցանք առաջ—
Պարզած հաղթության դրոշն հողմածեծ,
Բայց հեռուներում նոր ու անճանաչ
Այն դինավոր երգչի երգը չլուց:

Ահեղ հաղթության կամ վշտի պահին
Այդ երգն էինք մենք կրկնում անդադար,
Եվ մեր խմբերգին ձայնակցում էին
Օտար աշխարհի հողմերը օտար:

Այդ անմեռ երգով մենք Օդերն անցանք,
Այդ երգը նորից ուղեկցում էր մեզ,
Երբ մի օր, ինչպես աշարկու կայծակ,
Մտանք Բեռլինի պարիսպներից ներս:

Եվ հիմա, երբ որ լուել է օդում
Թնդանոթների որոտը վերջին,
Նույն երգն ենք երգում և հիշում տրտում
Դանուբի ափին ննջող մեր երգչին:

Դուք էլ հիշեցե՛ք հայոց եղերքում—
Երգչին, որ ընկավ մահով հերոսի,
Ընկավ, որ ինչպես իր սիրած երգում՝
Մեր Արաքսն աղատ ու հավերժ հոսի...

945 Թ.

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՂԱՎՆԻՆԵՐԸ

Թնդանոթներն ահարկուռ որոտացին ու հասան
Ստալինգրադից մինչ Բեսլին ու հաղթելով՝ լուեցին...
Եվ Կրեմլի բուրդերում, որ կանգնած են անսասան,
Խաղաղության սպիտակ աղամլներն էր թառեցին:

Փոթորկածեժ բուրդերում աղամլներն էր թառեցին...
Եվ երբ զանգերն են այնտեղ կես գիշերին զողանջում,
Նրբ հողմերն են հարվածում հազարամյա պղնձին,—
Նրանք ծանոթ այդ ձայնից չեն արթնանում, չեն թռչում:

Բայց կան անքուն գիշերներ: Ինչպես ամպրոպ ու կայծակ՝
Պարբասի տակ սայռալի համադարկն է որոտում.
Աղամլներն երամով վեր են թռչում թեարձակ,
Հրթիռներին միացած ճախրում նորից ցուրտ օդում:

Հրթիռներին միացած, ձուլված նրանց բոցերին,
Սալառնում են խուռներամ աղամլներն արթնացած
Սալառնում են անհանգիստ՝ ինչպես ռազմի օրերին,
Եվ երկնքից սպիտակ փետուրներ են թափվում ցած:

—Օ՛ ճախրեցեք համարձակ, սալառնեցեք գեպի վեր,
Աղամլներ սպիտակ, խաղաղության ոգիներ,
Եվ որտե՛ս այս հաղթական, որ ձեր քունն է խանդարում,
Որպես ահեղ մի երդում թող լսվի ողջ աշխարհում:

Թնդանոթներն են երգում... Դե՛, լսեցեք դուք նրանց.
Նրանք պատմում են իրենց հաղթանակը փառապանծ
Նվ երգում են մեծագործ զորավարին ու մարդուն,
Որ առաջվա պես նորից միշտ պատրաստ են ու արթուն:

Միշտ պատրաստ են ու արթուն, որ դուք ասլերք անխուժ,
Հավերժ ճախրեք երկնքում ձեր ձյունեղեն թևերով,
Նվ թառելով Կրեմլի պարիսպներին հաղթ ու սեղ՝
Հավերժական խնդության դողանջները միշտ լսեք:

Թնդանոթներն են երգում... Դե՛, լսեցեք դուք նորից
Թու՛ք ուրախ երամով, թու՛ք խաղաղ բուրդերից.
Նվ ճախրեցե՛ք, ճախրեցե՛ք, սալառնեցե՛ք դեպի ղեր,
Ազա՛մխներ սպիտակ, խաղաղության ոգի՛ներ:

46 Բ.

ԿԵՍՊԻԵԿԱՆ ԳԻՇԵՐ

1.

Փռվել է լուռ աշնանային մի ցուրտ դիշեր
Կասպիական ավազներում դորշ ու աղի.
Ահա Բաքում—հեռու լույսերը մշուշե,
Եվ ծովը սև, որ թափալվում է կատաղի:

Խուլ խրինջում է ավազատ քամին նորից,
Դանդաղ սահում է ամպերում մի կեռ եղջյուր...
Ծովը ելնում է, դարձնվում է ավերին
Ու սրսկում է հալթադույն մի աղաջուր:

Քամին թղթեր է թացնում ու հին լաթեր,
Նվվում է լեղճ ու կաղկանձում որպես մի շուն...
Ափին կանգնած են դորշ նավերը երկաթե,
Կարմիր պահակն ահա քայլում է մշուշում:

Ու թանձրանում է մառախուղը ամպերով,
Դանդաղ թաքչում են ցուրտ լույսերը հեռակա.
— Ծով իմ, ծով իմ, որքան դյուլթիչ է ու գերող
Գիշերդ ցուրտ, դիշերդ սև ու հաղթական:

2.

Այս ավերում թնդանոթները դղրդացին
Եվ Դենսաերվիլը կատարեց չար խրախճան.
Այս ջրերով նալը սողաց քսանվեցի,
Երբ թնդացին ռադմանավերը դալաճան:

Ահա իմ դեմ նաժը՝ կապույտ ֆոնի վրա,
Որոտացող փողեր ահա քանի՛, քանի՛..
—Ծո՛ղ իմ կապույտ, ահա կրկին տեսա նրանց,
Ահա հայացքը անժպիտ՝ Շահումյանի:

Կայմին թիկնած նայում է լուռ ու տխրադեմ
(Շուրջը ունում է ավաղում, անսանձ քամին),
Հեռվում Բաքուն է տարածված նրա հանդեպ,
Պարտված Բաքուն, որտեղ նստած է թշնամին:

Երեկ այնտեղ կարմիր դրոշն էր փողփողում,
Երեկ այնտեղ կարմիր էր դեռ—սովետական,
Ու դալարվում էր թշնամին որպես սողուն,
Երեկ այնտեղ կարմիր դրոշն էր փողփողում:

...Ահա թաքչում է նաժը սև որպես երազ,
Վերջին որոտն է խլանում թնդանոթի...
Իմ դեմ ահա Ախչա-կույման ավաղերախ՝
Ինչպես մի բուռ դեղնափետուր ու անոթի:

Քամին սլուկում է մերկ թփերը, զրնջում,
Քամին ավլում է անապատը ամայի...
Օ՛, այն թփերը, այն թփերը դողդոջուն
Կարծես ձեռքեր, շարժվող ձեռքեր են մարդկային:

Նրանք ձեռքեր են չորացած մերկ ու անդեն,
Որ բարձրացան անառիտում անարձագանք...
Նվում է դեռ Ախչա-կույման այս ավաղի.
—Մենք դեռ կղանք, մենք դեռ կղանք:

Նորից ծածկվում են այդ ձեռքերը ահարկու
Քամին ճչում է հերարձակ ու խենթ սլարում.
—Ծո՞ղն է իմ դեմ, որ թափալվում է աղմկում,
Եվ արդ պահակը լուռ քայլում է խալալում:

29 թ.

ՄՊԻՏԵԿ ՏՈՒՆԸ

Շատ է հնացել այդ տան անունը...
Դե՛, Ամերիկա, նոր անուն գտիր.
Ինչո՞ւ ըստխտակ կոչվի այն տունը,
Ուր սե ե՛ն բոլոր գործերն անխտիր:

Ինչո՞ւ ըստխտակ կոչվի այն տունը,
Որի պատերից չի ջնջվի երբեք
Խոշտանդված նեղրի կարմիր արյունը,
Չինացու ձեռքի հետքը արնաներկ:

Ինչո՞ւ ըստխտակ կոչվի այն տունը—
Ամենից դեղին տունը աշխարհում,
Ուր սենյակ չունի խաղաղությունը
Եվ սանդուղքների տակ է գիշերում:

Ինչո՞ւ ըստխտակ կոչվի այն տունը,
Որի աղյուսն է դուլարը կանաչ.
Որ ամեն վայրկյան փոխում է գույնը
Եվ դուռն է բացել նոր ռճրի առաջ:

Մինչև ե՛րբ այդպես կոչվի այդ տունը,
Որի մարմարե աստիճաններով
Հորդում է կեղտոտ զրաբատությունը—
Բոլոր ծովերը ապականելով:

Բնիկ է... Փոխեցեք Սպիտակ անունը
Եվ կամ վարձեցեք այն գույնի մի շենք.—
Որ չատենք նաև այդ անբիծ գույնը,
Չատենք ըստխտակ և սեը հիշենք:

48 թ.

ԵՐԻՏԵՍԵՐԻՆԵՆ ՔԵՅԼԵՐԳ

Ջարկէք ուժգին, թմրկահարներ, զարկէք արագ,
 Եվ թնդացէք, դուք շեփորներ որոտածայն,
 Այսօր նորից իջնում ենք մենք հրապարակ—
 Ռազմի երգով, դրոշներով հողմածածան:

Քալիս ենք մենք դործարանից, հանքի խորքից,
 Համայնական մեր դաշտերից արեադարդ,
 Քալիս ենք մենք— Հոկտեմբերին հասակակից,
 Նրա նման հզոր և միշտ երկտասարդ:

Որպես նվեր բերում ենք մենք հայրենիքին
 Քեղեցկություն, ուժ և մարմին արեակեղ,
 Քոչում ենք մենք—ողջյուն անմար արեգակին,
 Որ կրեմլի ամբոցի մոտ ժպտում է մեղ:

Նրա կամքով մենք հաղթեցինք հողմ ու ասերը,
 Հաղթող եղանք գետնի վրա, ծովում, օդում,
 Այդ նա է առաջ մղում, վարում պողպատածեղ
 Ու կատարից դեպի կատար առաջնորդում:

Եվ թե նորից մեր աշխարհին դա մի վատնդ,
 Նրա կամքով մենք կթողնենք դադդան ու սուն,
 Դադդանի տեղ մենք կվարենք նավեր ու տանկ—
 Եվ կնետվենք դեպի մրբիկը մահաթույն:


Մենք կհաղենք Սաալինյան երկաթ թևեր,
Մենք կխոսենք թնդանոթի գղրգոցով,
Մենք կսուրանք միշտ քեռուից դեպի քեռու—
Եվ կզոզան մեր ներքևում ցամաք ու ծով:

Ձի սասանի մեր աշխարհին ոչ մի մրրիկ,
Նա կմնա ամբողջ պես կուռ ու ահեղ,
Ու երբ հաղթած դառնանք ամբողջ անառիկ՝
Մեզ կժպտա ամբողջապես հանճարեղ:

Ջարկեք ուժդին, թմրկահարներ, դարկեք արաղ,
Եվ թնդացեք, դուք շեփորներ որոտածայն,
Այսօր նորից իջնում ենք մենք հրապարակ—
Ռազմի երգով, դրոշներով հողմածածան:

37 թ.

ju u n r
P u u u y t i n d n p p n u n t p



ՊԱՏԵՍԽԱՆ ՊՈԽԵԿԻՆԻՆ

Ես ինձ համար կերտեցի անձեռագործ հուշարձան...
Ա. ՊՈԽԵԿԻՆ

Դու քեզ համար կերտեցիր անձեռագործ հուշարձան,
Նրան դարձա՛յ սլառվանդան ժողովրդի սերն անմեռ,
Նրա դիմա՛յ շատ հողմեր շունդացի՛ն ու անցան,
Բայց նա մնաց աներեր:

Անցան հողմերն ու շողաց աղատության այդը մեծ,
Եղ Ռուսաստանն արթնացա՛յ լույսի տենչո՛յ անհադուրդ.
Ըմբոսառության մեծ երգիչ, քեզ խնդությամբ ողջունեց
Այնտեղ ամեն ժողովուրդ:

Քո անուընը որոտաց լեզուներով բաղձադան,
Քեզ ժաղացին և՛ տունդուս, և՛ ֆինն, և՛ հայ, և՛ կալմիկ,
Շրջապատեց ոխարար քո արձանը անոստան
Մի բաղձացեղ ընտանիք:

Հասա՛յ նրանց ձայնդ սլարդ, և շողացիր դու որպես
Ժամանակի անդունդից մռնչացող մի կայծակ.
Միայն նրանք հասկացան քո երգերը բոցակեղ
Նո՛յ քո խոյանքն համարձակ:

Այն աշխարհում, ուր տեսար միայն շղթա ու շերիմ,
Քեզ է ահա ողջունում մեր սերունդը հողմածին,
Եվ քո անհատ բարձունքից դու ժպտում ես մտերիմ
Թե մանուկին, թե մեծին:

Եվ ժողովուրդն իմ սիրով քո անունը կտանի,
Դեռ կաանի հեռուներ, դեպի լուսեղ ապագան,
Եվ միշտ կապրես դու որպես մեր այս նորոգ աշխարհի
Քաղաքացին խկալան:

37 թ.

Լ Ի Յ Ե Յ Ո Ի Մ

«Այսեղ է սովորել և դաստիարակվել Ա. Ս. Պուշկինը»
(Մակագրութիւն Լիցեյի պատին)

Արքայական պուրակներ, ծառուղիներ լայն ու ձիգ,
Շատրվաններ անհանգիստ և անդրիններ գեղեցիկ,
Ահա պալատը հսկա, որ հսկում է անցորդին
Հարյուրավոր աչքերով կասկածալոր ու մթին:

Ահա գուռը կամարներ, անդ դռներ փակ ու մուխ,
Ահա Լիցեյն ամայի, անա մի նեղ լուսամուտ,
Հենված նրա չոր գոգին, բռնած ճակատն իր դալուկ,
Արշալույսներ է դիտել սևագանգուր մի մանուկ:

Նայել է նա դեպի դուրս և աչքերով վառվում
Փնտրել է իր կարգացած հեջիաթներն ուց հեռուն,
Բայց փակել են հորիզոնն ապարանքներն անագին,
Նվ հայացքը երազող նորից իջել է գրգին...

Նրա դիմաց մինչև լույս ապարանքում քարակոփ
Քրախճանք է արել նա՝ ռուսաց արքան լսենթ ու ցոփ,
Ի՞նչ իմանար, որ այնտեղ, Լիցեյի մուխ այն խցում,
Ազատատենչ մի արծիվ իր պիրկ թևերն է բացում:

Ի՞նչ իմանար, որ շուտով նա կսուրա ամպերում,
Որոնց ներքո ցասումի արդար օղկիանն է եռում,
Որ կթնդա նրա երգն Ռուսաստանում բովանդակ,
Որ կգողա այդ երգից ինքը—արքան սսկեթագ.

Որ կերգի նա՝ տրված ազատության երաղին
Որ երբեք չի խոնարհվի դահին ու սուտ հերոսին,
Որ տանելով ծաղր ու վիշտ, բռնած իր կուրծքն արնաների՝
Մահվան միջով կքայլի դեպի տալժառ մի եղերք:

37 թ.

Հ Ո Ւ Յ Ա Ր Չ Ա Ն

Մրրկահավի երգչից

Որպես պատիւանդան՝ ծովի եզերքին
Ընտրեցեք մի ժայռ, ապառաժ մի լեռ,
Եվ այնտեղ՝ ձուլված հողմերի երգին,
Ամենակործան շանթերից էլ վեր,—
Թող հալարա կանգնի նա բրոնզ դառած,
Եվ ծաղիկների, դափնու փոխարեն
Թող մրրկահավեր դան թևատարած
Ու պատիւանդանի բարձունքին թաւեն:

Թող մրրկահավեր իջնեն այդ գահին,
Ուր չեն հասնելու արծիվն ու քաղեն,
Եվ թող մրրիկի, փորձության պահին
Ծով ու հող նրանց ռազմերգը լսեն...
Եվ թող մեզ թվա, թե խենթ տարերքում,
Հայացքը դեպի ծովն ալեխափով՝
Այդ նա է հավերժ խնդությամբ երգում—
—Ողջո՛ւյն քեզ, մրրիկ, ողջո՛ւյն քեզ, կռիվ:

46 թ.

ԵՐԿ ՓԵԼԻՔՍ ՉԵՐԺԻՆՍԿՈՒ ՄԱՍԻՆ

Անմեռ կմնա բոլոր լեզենդներում
Հեղափոխութեան ասպետը արի:—
Նա մեր թշնամուն երբեք չէր ներում,
Բայց ջերմ էր մեզ հետ, անստիճան բարի:

Նա գիտեր սիրել ծաղիկներ ու երգ,
Նա մանուկներին հաճախ էր հիշում,
Նա գիտեր ժպտալ և հետո գրել
Թշնամու համար մահվան որոշում:

Նա խորն էր սիրում աշխարհն ու մարդուն,
Դործը մեր արդար, հայրենիքը մեծ,
Հենց դրա համար՝ զգաստ ու արթուն՝
Իր սուրն անողոք նա վայր չղրեց:

Որ ատելութեամբ ջախջախում էր նա
Հազար գլխանի թունավոր օձին,
Չէր թողնում երբեք, որ նա փաթաթվի
Մեր հայրենիքի լուսեղ ամբողին:

Դու էլ, բանաստեղծ, նմանվիր նրան,
Եվ թող միասին գնդան ու շողան
Սուրն ու քնարը քս արդար ձեռքում,
Որպեսզի հավերժ անվտանգ մընան
Այն ծաղիկները, որ դու ես երգում...

33 թ.

Օ Ր Ա Յ Ո Ւ Յ Յ Ը

Բացում եմ ահա օրացույցը նոր,
 Պոկում եմ մի թերթ և հուլյոզով խորին
 Շրջում եմ նրա թերթերը բոլոր,
 Որ պիտի պոկենք մենք օրը-օրին:

Ահա թերթիկներ, որ այսօր կրկին
 Խոստանում են մեզ նոր օրեր դարնան,
 Նոր ծիածաններ, որ մեր ճամփեքին
 Պիտի ցնծության կամարներ դառնան:

Ահա թերթիկներ, որ ես թերթելիս
 Հասուն հասկերի սոսափն եմ լսում,
 Սրանց հետ շողշող ամառն է դալիս,
 Նրբ սերմնացանն է հնձի սպասում:

Ահա թերթիկներ, որ դու կպոկես
 Ահա թերթիկներ, ողկույղների հետ,—
 Որ պիտի թափվեն փաթիլների սկս,
 Նրբ ձյունը ծածկի դաշտ ու արահետ:

Ահա թերթիկներ... Եվ ամեն թերթիկ
Մեր կյանքից պոկվող մի օր է նորից...
Ե՛կ, այնպես լինենք, որ օրվա զերջում
Գոհ լինենք մեզնից և անցած օրից:

Եվ երբ սալտակ թերթիկներն ամեն
Թափվեն հազերժի ձեռք ճանապարհին,—
Նրանց զրայով թող հալարտ քայլեն
Մեր պայծառ կյանքի ամիսն ու տարին:

47 թ.

Ժ Ի Ժ Ե Ռ Ն Ա Կ Ը

Ծիծեռնակ, ծիծեռնակ
Վու գարնան սիրուն քոչնակ...
Գ. ԴՈՂՈՒՅԱՆ

Հաղթեր կան՝ մարդուց երկար են ապրում...
Եվ ծիծեռնակն այն, — որ ցուրտ ամերում
Հանդիպեց մի օր մեր պանդուխտ երգչին, —
Գուցե չի երգել դեռ երգն իր վերջին:

Ապրում է գուցե, նորից ճովողում՝
Բուն հյուսած երգչի երազած գյուղում,
Եվ Աշտարակի բարդիները ձիգ
Հսում են նրա երգը գեղեցիկ:

Դեռ կապրի գուցե... Նրան կլսեն
Պոետներ ուրիշ, որ մեզ պես կասեն,
Թե ինչո՞ւ, ինչո՞ւ երբ աշխարհ կլանք՝
Մեզ էլ չարվեց այդքան երկար կյանք:

Եվ կնախանձեն այդ նույն ծիծառին,
Որ թառած գուցե իմ տնկած ծառին,
Մեզնից հետո էլ դեռ պիտի երգի
Չքնաղ գարուններն իմ հայրենիքի:

47 թ.

Ս Ե Վ Ա Ն

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Այնքան չքնաղ ու կախարդիչ,
Այնքան ուրախ, այնքան տրտում
Ձի շողացել դեռ ոչ մի լիճ
Նրկրի վրա կամ հեքիաթում:

Ցնորք է նա, կապնւյտ երազ,
Ուրիշ Սեան աշխարհում չիք,
Չունի այնքան հմայք ու նաղ
Կապուտաչյա ոչ մի աղջիկ:

Սիրուն է նա լուսարացին,
Ե՞րբ չէ սիրուն Սեանն,—ասեք,
Քար են կտրել նրա սիրուց
Մեր Գեղամա լեռները սեզ,

Քար են կտրել և ծերացած,
Իրենց գլխին ձյուն ու ամպեր,
Քար ու դարեր նայում են ցած—
Լճին ջահել ու անտարբեր:

Նս էլ—նրա երկրպագուն,
Լեռների պես համր ու լռիւն,
Ահա մտքով նորից անքուն,
Տեսնում եմ ինձ նրա ափին:—

Շողում է նա՝ լա՛յն, մեղմօրո՛ւր,
Նման մանկան ջի՛նջ երազի՛ն.
Իրար նայում են լո՛ւս, մոլոր,
Երկու երկի՛նք, երկու լուսի՛ն:

Ջրում աստղերն են լողանում
(Ասում են՝ դանձն այդ հուրհրան
Իշխան ձկներն են դողանում
Եվ զարդարում մեջք ու իրան):

Ահա կղզի՛ն—սե, ահասաստ,
Ահա լճանքի գմբեթը սուր,
Ահա հեռվում մի առադաստ
Սահում է դեռ—չգիտես ուր...

Սահում է նա, թվում անհաս,
Մաքերդ ամեն քաշում—տանում,
Եվ քո հոգում հազար երազ,
Հազար հուշեր են արթնանում:

Երկնում ես դու հազար մի երգ,
Ըզգում սիրո կարոտն անհագ,
Եվ հոգուդ հետ—բացված ու մերկ—
Լիճն է ծփում ոսկեկոհակ:

Ժպտում է նա քեզ պես ուրախ,
Տրամում է նա—քեզ զշտակից,
Իսկ երբ գնաս՝ նայում է դեռ
Բլուրների, ամպի տակից:

Նայում է նա սիրունու պես,
Տխուր-աբառում կանչում է նա,
Մեղմաշշունջ ասում է քեզ—
Ո՛ւր էլ գնաս՝ չես մոռանա...

Ե՛վ իսկապէս, չեմ մոռանում—
Թեկուղ անցնեմ երկիր ու ծով,
Հիմա էլ տոթ նրեանում
Ըզգում եմ իր համբույրը զոյլ:

Մնաց Սեանն իմ երկնազուն՝
Ձյունադադաթ, հեռուներում,
Բայց ամեն օր զվարթ Ձանգուն
Նըրա բարեն է ինձ բերում:

Իսկ երբ վառվում է սեղանիս
Իմ լուսամփոփն,—այն ժամանակ,
Գիտեմ՝ այդ ջուրն է Սեանի,
Դարձել է լույս, խուժել սենյակ:

Ու երբ մի պահ աչքս եմ փակում—
Լույսը կրկին դառնում է ջուր.
Իմ դեմ կապույտ լիճն է ծփում,
Յոլում են ամպ ու լուսնեղջուր...

Ե՛վ ես տարված այդ երազով,
Իմ Սեանից կրկին բաժան,
Բայց իր տված պայծառ լույսով՝
Դըրում եմ երգն այս անաբաժան:

49 թ.

ՀԱՅՐԵՆԻ ԶՐԵՐԸ

Հայրենի ջրեր... Դաշտում ու ձորում
Հավերժ կարկաչով խոսում են նրանք,
Երանի նրան, ով հուն է փորում,
Որ մենք այդ հունով երգենք ու գնանք:

— Երանի նրան, ով արդար ձեռքով
Փորել է այս խոր ջրանցքն ու առուն,
Որ մենք կարկաչենք հավերժի երգով
Նվ բերենք մեզ հետ վարդեր ու գարուն:

Երանի նրանց, որ սրտով զվարթ
Դեռ նոր պիտի գան, նոր հուներ փորեն,
Որ մենք մտնելով նոր պարտեզ ու արա՝
Դառնանք ողկույղներ և ոսկե ցորեն:

Երանի և քեզ, որ մեր եղերքին
Կանաչ խնդուխուն, սեր պիտի երգես...
Թե երգդ էլ նման լինի մեր երգին՝
Երանի և քեզ, երանի և քեզ:

47 թ.

Հալլանդեր

Ջ Ա Ն Դ Ե Ջ Ո Ի Ր

Երբ թեմուրն տհեղ հասաւ չայաստան՝
 Սրի դարնելու մեր աշխարհն արար,
 Ասում են՝ սյունյաց ծերերն իմաստուն
 Մի դանդ ձուլեցին մեծ ու փրկարար:

Նրանք ահադոր դանդը կախեցին
 Մեծ լեռան վրա—աստղերի տակին,
 Ու երբ երևաց թաթար այրւածին՝
 Շարժեցին նրա լեզվակն ահադին:

Դորդաց այնժամ դանդերի արքան,
 Սասանեց ամպոտ լեռնէրը սյունյաց,
 Բոց նժուլդներով կտրիճներն եկան,
 Իջան ամպերից փոթորկասլաց:

Իջան մեր հայոց կտրիճներն անթիւ,
 Զարդեցին հաղար վահան ու նիզակ,
 Ու թողած կռիւում և՛ սուր, և՛ սլառիւ՜
 Փախաւ հաղիւ՜աղ թեմուրն հրոսակ:

Փախալ բարձրացալ մեր լեռներն անհաս,
Սև ամպի նման նստեց, ծանրացալ,
Ու ամեն գիշեր թաքուն, անսպաս
Հրով ու սրով ներքև սլացալ:

Բայց ամեն անգամ, երբ խուժում էր վար,
Ջանգն էր դղրդում, հայտնում ամենքին...
Դուրս էին նետվում մերոնք զինավառ,
Եվ փախչում էր նա կրկին ու կրկին:

Միշտ փախչում էր նա, ում կաղ ոտքի տակ
Արքաներն էին գլխարաց սողում,
Եվ թառած սարին, ցամաքի անհատակ,
Հայոց փրկության զանգն էր նղովում:

— Գնացե՛ք խկույն, — ասաց իր մարդկանց, —
Գանձեր խոստացե՛ք, գտե՛ք այն հային,
Որ հանձն կառնի խորտակել անդարձ
Ինձ քնից զրկող զանգը գիվային:

Եվ նրանք ծախյալ շեն ու գյուղ մտան
Գտնելու զանգի ճամփան մատնողին,
Մեկի փոխարեն երկուսին գտան,
Որ ոսկով խաբված հայտնեցին ուղին:

Նրանց մատնությամբ սուրբ զանգին հասան,
Տակը մեծամեծ կաղնիներ դրին,
Վառեցին հրդեհ և լեռնառասան
Ջանգը հանձնեցին երկնահաս հրին...

Թեմուրը տեսավ... Կանգնեց համարձակ,
Շուտ նժույգ հեծավ, և որոտընդոտ՝
Ինչպես ամպերից պոկված մի կայծակ՝
Նետվեց նա դեպի մեր աշխարհն ըմբոստ:

Իջան կատաղած, որի քաշեցին —
Ում քնած գտան, ում անգնն գտան,
Ծայր չկար կոծին, ծխին ու բոցին,
Արյունով ներկվեց գետը Որոտան:

—Ջանդը դարկեցէք,—ճշացին մերոնք,
Բայց, ամանդ, տեսան տհով անպատում,
Թե ինչպէս վառվող օձերով պատած
Հայոց արթնութեան դանդն էր ճարճատում:

Ճանչում էր նա, պղինձն հրահոս
Թափվում էր շող-շող ու ծծվում հողում,
Մերկ լեռան վրա արտում ու անխոս
Լեզվակն էր միայն հողմածեծ դողում:

Եվ մարդիկ տհով ճշացին նորից.
—Ա՛խ, էլ դանդն է դժւր, փրկիչ դանդն է դժւր...
Ու ասում են, թե հենց այդ սե օրից
Երկրի անունը մնաց Ջանդեղութ:

Այն էլ են ասում, թե այն հողմահար
Մերկ լեռան կողին, հեռու Ղափանում,
Հիմա դեռնի տակ մարդիկ անհամար
Այն հրաշք դանդի պղինձն են հանում:

42 Թ.

ԲԱԼԼԵՐԻ ՊԵՐՏԻԶՆԻ, ՆԲՍ ԿՆՈՋ
ԵՎ ՁԻՈՒ ՄԱՍԻՆ

Որպէս ընկերներ եղան մտերիմ,
Որպէս ընկերներ միմյանց սիրեցին
Պարտիզանն ու ձին:

Իր ձիուց բացի, աշխարհի զրա
Նա ուներ մի կին՝ աչքերով իր ջինջ
Եվ ուրիշ ոչինչ:

Մի մութ իրիկուն համբուրեց նրան
Ու երբ որ ծագեց լուսինը լրիվ՝
Նա դնաց կռիվ:

Նա դնաց կռիվ, չդարձաւ էլ տուն,
Եվ Դոնի ափին մնացին մենակ
Մի կին, մի տնակ:

Էլ ետ չդարձաւ, և կռիւ դաշտում
Գիշեր ու ցերեկ անքուն կռիւցին
Պարտիզանն ու ձին:

Նորից ծանրասան ամպերի տակից
Լուսինը լրիվ դանդաղ բարձրացաւ,
Ու տարին անցաւ:

Եվ մի մութ գիշեր փայտե տնակի
Գնակը բախեց ոտներով իր զույգ
Մի ծանոթ նժույգ:

Դռնակը բացեց կինն ուրախացած...
Ձին էր միայնակ վերնջուռ շեմքում
Ու հոգնած անքում:

Ձին լիզեց նրա ձեռքերն ու խելոք
Աչքերում պահած արտասուք ու ցավ՝
Դուին կռացավ:

Կինը վշտադեմ բարձրացավ թամբին
Եվ հողմի նման թռավ հերարձակ,
Դաշտերով արձակ:

Ու կանգնեց հանկարծ: Փետի եղերքին
Քաջ պարտիզանն էր ընկած վիրավոր,
Ու վերքն էր նրա մահացու ու խոր:

Իջնելով թամբից դրկեց մեռնողին.
Ու նայեց նրան ժպտով ճանաչ
Պարտիզանը քաջ:

— Մեռնում եմ, — ասաց, — մեռնում եմ, իմ կին,
Ու էլ չեմ կռվի չեմ լուծի վրեժ
Գնդակով իմ թեժ:

Մեռնում եմ, . Բայց կա դեռ անեղ մի մարտ...
Առ սուրս արնոտ, առ հրացանը իմ,
Ձին հավատարիմ—

Եվ թռիւր այնտեղ, կռվիւր դու հալարտ
Ու մեռիւր կարմիր դրոշի տակին,
Պարտիզանի կին:

Ասում են, շուտով Դռնում հայտնվեց
Տղամարդու գորշ զգեստներ հագին,
Պարտիզան մի կին:

Պալեց քաջարար, ուժ ու շունչ տալեց
Իր ներկայութեամբ գնդերին ցրելով
Ու մղեց կռիվ:

Բայց երբ ծաղում էր լուսինը լրիվ,
Տխրում էր հանկարծ, շրջում առանձին...
Տխրում էր և ձին:

Հետո արձակած մաղերը խռիվ,
Թռչում էր ինչպես կատաղի քամին
Դեպի թշնամին:

Նրա ետեից, պարտիզանական
Խումբն էր սլանում անվախ, աներկյուղ—
Քաղաքներ ու գյուղ:

Ասում են, այնտեղ նա կռիվեց երկար,
Այնտեղ, ուր Դոնի ստեպն է վալում,
Եվ այն թեժ կռիվում—

Որպես ընկերներ եղան ժշտակից,
Որպես ընկերներ իրար սիրեցին,
Պարտիզանուհին և այն սևուկ ձին:

ԲԱԼԼԵԳ ՏԵՆ ՄԱՍԻՆ

Ծովի եղերքին, անթափանց միդում,
Պահակն է քայլում ու հանգիստ երգում.—

—Հեռու մի հովտում, գետի մեջ վճիտ
Ցուլում էր խաղաղ մի փայտե խրճիթ:

Դեմը բարդու ծառ, զրան՝ ահագին
Հարդե քնի մեջ մի ծեր աբաղիլ:

Բարդու սկս արագ ևս առա հասակ,
Այդ տան մեջ դարձա առնասիրտ կաղակ:

Թուխ դեմք ունեի, ահեկի ուսեր,
Տակս՝ սև նժույգ ու կողքիս սուսեր:

Ժպտում էին ինձ թե աղջիկ, թե կին,
Բայց ևս ընտրեցի նրանցից մեկին:

Ընտրեցի մեկին, ու մի լուսրնկա
Այն բարդին եղավ մեր սիրո զկան:

Բնում շարժվեց աբաղիլը լուռ,
Վերից վայր ընկավ մի ճերմակ փետուր:

Ու աղջիկն առավ փետուրը ընկած,
Դրեց ամիս մեջ ու այսպես ասաց

Դիր ծոցդ—պահիր և տխուր ժամին
Նայիր, հիշիր ինձ—քո թխածամին:

Նվ այդ ժամն եկաւ... Այն ահեղ տարին
Միշտ ամալ էր չորած դեմի անտառին:

Մի խաւար դիշեր, երբ դռաց նա խուլ,
Թողի ես նրան ու տունը խաւրոտը:

Իմ մօր հետ մեկտեղ երկինքն էլ լացեց,
Թեքիլեց զշտահար բարդին հողմածեծ:

Շատ արցունք թափեց աղջիկն իմ սիրած,
Նվ պոկիլեց տեղից իմ ձին սրընթաց.

Ու երեք դիշեր ծանոթ համփեքով
Թռալ դեպի մարտ, դեպի Պերեկոպ:

Հէյ, հէյ Պերեկոպ... Ինչպէս մոռանամ
Նս այն մարտերը, ինչպէս մոռանամ:

Կայծակն էր դարկում, քամին էր երգում
Նվ մեր արյունն էր գետինդ ներկում:

Նվ այն թեժ կռիւում, հիշում եմ, մի օր
Նս ընկա թամբին՝ խոցված, վիրավոր:

Բայց ինձ փախցրեց հողմաթե իմ ձին,
Նվ ընկերներս վերքս բռնեցին:

Բռնեց իմ վերքը, փակիլեց նա տրապ,
Նվ հինդ օր չանցած Պերեկոպն առանք:

Խաղաղիկեց չորս դին... Նվ երբ որ նորից
Ամալը որոտաց, հիշեցի որ ինձ—

Հեռու մի հովտում, գետի մոտ վճիռ
Սպասում է դեռ մի փայտե խրճիթ:

Նս հրաժեշտ տալի գնդին, գինկոմին,
Անբաժան իմ ձին հանեցի գոմից:

Թռալ նա նորից ճամփեքով ծանաթ,
Թռալ մեր եկած նեղիկի կածանով:

Նորից ևս տեսա բարդինները սուր,
Մեր դյուղը տեսա, բայց իզո՛ւր, իզո՛ւր...

Չկար մայրս ծեր, մեռել էր վաղուց,
Անծածկ խրճիթում քամին էր խաղում:

Չկար տան դիմաց իմ բարդին արդեն,
Սրադիլը ծեր և բունը հարդե:

Չկար իմ սիրած աղջիկն աննման,
Տարել էր նրան մի ծեր առաման:

Էլ ո՛ւր դռների ևս նրան, էլ ո՛ւր,
Լուռ հեծա իմ ձին, հեռացա ախուր:

Հեռացա ախուր, հեռացա անդարձ,
Հեռվում թողնելով տուն, դեռ ու անտառ:

Տարիներ անցան, և վերքս այս նոր
Լավացավ ինչպե՛ս վերքերը բոլոր:

Այս վերքն էլ փակվեց, լավացավ այս էլ,
Հիմա ես ունեմ թե՛ տուն և թե՛ սեր:

Իմ տունն է այս մեծ երկիրը ժպտուն,
Որին ավեցի և՛ արյուն, և՛ տուն:

Իմ սերն է ահա այս ծովը անտառի,
Ա՛խ, այն աչքերի նման կապուտառի:

Ոչոք իմ սիրուց ինձ էլ չի պոկի,
Եվ տունս այս մեծ չեմ տա ոչոքի:

Հսկում եմ, ահա, ևս որպես պահակ,
Ծոցումս ճերմակ մի փետուր պահած:

Հանում եմ, մեկ-մեկ և նայում խոկույն
Հիշում եմ նրան, շորք դույնդդույն... ,

Հիշում եմ ինչպես դեսի մեջ լինի
Ցուում էր խաղաղ մի փայտե խրճիթ...

Ծովի եզերքին, անթափանց միգում,
Պահակն է քայլում ու հանգիստ երգում:

36 թ.

ԲԱԼԼԵԴ ԿԱՊՈՒՏԵԼՅԱ ՄԱՆԿԱՆ ԵՎ ԱՐԵՎԻ ՄԱՍԻՆ

Ես կերգեմ և թող դողան,
Հացեն մշտից հասկ ու կակաչ,
— Փոքր էր տղան, այն լավ տղան,
Փոքր էր այնքան ու կապուտաչ:

Ուներ գանգո՛ւր, գանգո՛ւր մաղեր,
Փայտե փոքրիկ նժույգ ուներ,
Սիրում էր նա խաղալ, վաղեր,
Մինչև մթին տուն գար, քներ:

Նրա դնդուն, ջինջ ծիծաղից
Տուղտերն էին բացվում, ժպտում.
Բայց այդ դարուն ոչ մի ծաղիկ
Չլողացին գետի ջրում

Չլողացին գետի ջրում
Վայրի բաղերն ու ամպը մութ
Իջավ, ծածկեց գետ ու խրճիթ,
Չբացվեցին դուռ, լուսամուտ:

Քամին երգեց ահասարսուռ,
Մերիկ եղավ մի իրիկուն,
Հայրը առավ հրացան ու սուր
Ու դուրս ելավ տնից թաքուն:

Լուռ համբուրեց դռան շեմին
Նա իր որդուն, հետո արտում
Հեծավ իր ձին, ինչպես քամին
Սուրաց, կորավ եղեգնություն:

—Գնաց,—ասաց մայրը նրան,—
Որ քեզ բերի անուշ գարուն,
Արև բերի քեզ հուրհրան,
Որ լույս լինի մեր աշխարհում:

Նստեց տղան ճամփի քարին,
Նայեց, նայեց նա շարունակ,—
Չէր երևում հանապարհին
Ո՛չ ձիավոր, ո՛չ արեգակ:

Նիրհեց տղան,—արև չեւառավ,
Տեսավ ծաղիկ ու ծիածան...
Եվ տարիներն երազի պես
Եկան ուրախ, տխուր անցան:

Ու մոռացավ նա դեմքը հոր,
Հայրն էլ ձուլվեց արեգակին,
Որ պիտի դար, ծաղեր մի օր՝
Նստած սեռի իր նժույգին:

Անցան օրեր: Տայգաներից
Հորից մի օր նամակ բերին,
Գրել էր նա.—«Կգանք նորից,
Մեր պետն է նա՝ Լենին քեռին»:

Նորից ձեռին մի փունջ կակաչ՝
Նստեց տղան, նայեց հեռուն,
Նա սպասեց իր հորը քաջ
Եվ արևին—Լենին քեռուն:

Եւ մի անգամ որոտացին
Արտերի մոտ ուռմբ, թնդանոթ,
Տեսաւ տղան իր հոր սև ձին,
Տեսաւ իր հոր դեմքը ծանոթ:

Թռչում էր ձին քառամբակ
Հայրն էր թռչում իր ձին հեծած,
Եւ թշնամին սրերի տակ
Հասկի նման թափվում էր ցած:

Ցատկեց տղան իր փունջն առած,
Ելաւ իսկույն դեմի ծառին,
Փունջը շարժեց, ուրախ ճչաց—
—Կեցցե արե—լենին քեռին:

Հանկարծ լսվեց խուլ կրակոց...
Փունջը ընկաւ բարդենու մոտ,
Ճչաց տղան, ընկաւ ճյուղին՝
Որպես դըրոշ մի արյունոտ:

Երբ առաջին ձիերն հասան
Արտում կանգնած կանաչ բարդուն,
Իջաւ հերոսն այն պարտիզան
Ու հանաչեց փոքրիկ որդուն...

Ու երբ նրան տվին հողին
Արտասվեց ջուկն իր գլխահակ,
Հետո փոքրիկ մի թումբ թողին,—
Ծառն էլ դարձաւ պատվո պահակ

Կանգնած է դեռ կանաչ բարդին,
Նրա գոլում հանգչում է լուռ
Պարտիզանի փոքրիկ որդին...
Ծառն է խշշում, պառմում տխուր,—

Թե հայրն ինչպե՞ս թողեց նրան,
Որ մեզ բերի անուշ դարուն,
Արե բերի մեզ հուրհրան,
Որ լույս լինի մեր աշխարհում:

Պատմում է նա միշտ հողմածե՞ծ
Մանուկներին ու կակաչին, —
Թե այն փոքրիկը ողջունեց
Այդ արևի շողն առաջին...

— Ես կերդեմ և թող դողան,
Լացեն վշտից հասկ ու կակաչ,
Փոքր էր տղան, այն լավ տղան,
Փոքր էր այնքան ու կապուտաչ:

39 Թ.

Մ Ի Ը Կ Բ Ը Ռ Ը

(Ըստ Ա.Լ. ԲԵԶԻՄԵՆՍԿՈՒ)

Ֆաւիստական գերության մեջ խոսանգված
հերոս կոմեիսուհի Հաննա Կոզուբայի
հիշատակին

Չորս օր շարունակ թշնամու սպան
Հարցաքննում էր գերի աղջկան.
Ոլորում էին ձեռքերը նրա,
Ծեծում մտրակով ու տանջում փոսում,
Բայց լուռ էր նա միշտ, բայց նա չէր խոսում:

Փակ էին քնքուշ շուրթերը կրկին,
Եվ դիմանալով անլուր տանջանքին՝
Միայն երբեմն հառաչում էր նա,
Ու ցնցվում էին ցաւից ջղաձիգ
Ուսերը նիհար, դեմքը գեղեցիկ:

Եվ սպան տապ, թե չի համբերի,
Թե դա սկիզբն է դեռ տանջանքների,
Թե դեռ կտեսնի աղջիկն այն համառ
Աշխարհում չեղած տանջանքներ բաղում.
Բայց լուռ էր գերին, դարձյալ չէր խոսում:

Երբ տեսաւ սպան էլ հնար չկա՝
Բռնեց դողդոջուն ձեռքը աղջկա,
Եվ ափը այրեց վառվող սիգարով...
Ապա պահանջեց շիկացած երկաթ,
Բայց լուռ էր գերին, լուռ էր ու հպարտ:

Արնաքամ էր նա, արդեն կիսամեռ,
(Իսկ դեմը՝ կրակ, դանակ, շղթաներ).
Բայց չէին կարող կորզել նրանից
Այդ դժոխային նկուղում խաղար
Թեկուղ մի շշուռձ, կամ թեկուղ մի բառ:

Ճեղղելով ցավի ճիչը կոկորդում,
Կանգնած աներեր, կանգնած անկոտորում,
Նա շուրջն էր նայում արհամարհանքով,
Եվ վառվում էին նկուղում այն մութ
Հերոս աղջկա աչքերը կապույտ:

— Պարզ է ամեն ինչ, հիմա կմեռնես,—
Որոտաց սպան,— կսպանեմ հենց ես,
Բայց պահանջում եմ— մեռնելուց առաջ
Բաց արա քո այդ շուրթերը համառ,
Հայտնիք մեզ մի բան, կամ թեկուղ մի բառ...

Եվ այնժամ, ինչպես երկու արեգակ,
Բիլ աչքերը մութ կամարների տակ
Հանկարծ շողացին, և ներս թշնամուն
Ուղղելով հայացքն իրեն խստալի,
Նա ասաց մի բառ. նա ասաց—
— Ստալին...

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ

Ինչպէս խնդության անդուստլ արտասուք,
Թափվում է հանդարտ անձրևը դարնան.
Ծառերն այս գիշեր կանաչ կդառնան,
Գաշտում կերևան ծաղիկներ ու սունկ:

Ու արագիւլը՝ ծեգին կտարդի
Բաքդու կատարին թևերն իրեն բաց.
Մեղուն կակաչի բաժակը մտած
Պիտի օրորվի, ամառ երազի:

Կիւմլի մեր դեմ զվարթ ու կանաչ՝
Մեր հայրենիքի լուսազարդ հեռուն,
Հալքի թևերին կգառ դու, դարձն,
Կգաս հմայքով նոր ու տնճանաչ:

Կժպտաս նորից աշխարհին, մարդուն,
Ծառաստաններին, հանդերին, մարդին,
Եվ գրկած ծաղիկ փնջերը կրկին,
Կմտնես ազատ ամեն հարկ ու տուն:

Ե՛կ հայրենիքիս սլաշմառ եղերքում
Բաց են քո գլմաց ամեն սիրտ ու դուռ՝
Օ՛, եկ, խնդություն, դարձն ոսկեհուր,
Եվ շողմ դու, մեր սրտում ու երգում:

37 թ.

Ռ Ո Ւ Ս Թ Ա Վ Յ Ի Ն

(Հասկածներ համանուն պոեմից)

1

Կար հոյակապ մի ամբողջ. այդ ամբողջում բարձր ու հին
Ապրում էր մի ժամանակ վրաց թամար թագուհին.
Նըրա տեղին կխանդեր անդամ արևն հուրհրան,
Աշխույժ էր նա քան այժյամ և քան նոճին—գեղելիքն:

Ելնում էր նա աշտարակ իր աշխարհին նայելու—
Վրաստանն էր նրա դեմ փռվում անծայր և հլու,
Լեռների շարքն էր գծվում լուսաբացի մշուշում
Եվ անտառն էր չորս բոլոր սսկեհանդերձ խշխշում:

Տեսնում էր նա անդունդներ և հովիտներ լայնանիստ,
Աղամանդյա ջրվեժներ, Քառն ու Դարյալն անհանդիստ
Լսում էր դորշ վանքերի պղնձե լացն հնավանդ,
Տեսնում էր նա անհամար ճորտ գյուղականեր, լեռ ու հանդ:

Բայց չէր հրճվում այս անդամ արքայուհին իր գանձով,
Ճամբարներով դորքերի, հարստությամբ իր այդ ծով,
Ո՞ւր էր գանձն իր գանձերի, իր աստվածն երկրածին,
Ո՞ւր էր արյգոք իր արև, սսկեքնար Ռուսթավելին:

Արդեն տարին լրացավ—գահի վրա թե մահճում
Նըրա համար է միայն պերճ թագուհին հառաչում,
Չեն երևում էլ աչքին ոչ գանձ, ոչ էլ ամուսին,
Տեսնում է լոկ նա երգչին, խորհում է լոկ այդ մասին:

Ինչո՞ւ, ինչո՞ւ չի գալիս և չի բերում նա արդյոք
Իր նոր գիրքը ոսկերառ, որ խոստացալ ծնկաչոք.
Միթե նրան հմայեց այս աշխարհում մի այլ կին.
Եվ հուսահատ հայացքով նայում է միշտ ճամփեքին...

2

Արհամարհած խրախճանք, թողած նժույգ դենք ու թուր,
Նորից առած մագաղաթ, ձեռքին ճերմակ մի փետուր,
Նստած էր նա—Ռուսթափյին, երգի արքան այն հմուտ,
Եվ գրում էր անընդհատ, մայրամուտից մայրամուտ:

Հողմն էր ոռնում լեռներում և անտառն էր հեծում մերկ,
Իսկ նա արև էր երգում, հեռաստաններ անեղերք.
Լույս էր երգում մեծ Շոթան և այդ լույսի հեղեղում
Ալթանդիլի, Տարիելի դենք ու զրահն էր շողում:

Մեկը ուներ թինաթին, մեկը չքնաղ Դարեջան,
Ուժն էր երգում նա նրանց և նրանց սերն անլախճան,
Եվ թե ինչպես սիրատենչ՝ չեն նկատում հուր ու բոց,
Անապատ էր նա երգում, առյուծների մռնչոց:

Երգում էր հուր նժույգների, դենքերի շաչ և շառաչ,
Վառվող բերդեր ու քաղաք, անթիվ դիեր ու հառաչ,
Հասնում էր նա իր սիրած վաղրենավոր հերոսին,
Ուրախանում և լալիս միշտ նրա հետ միասին:


Հերոսություն էր երգում, երգում էր սեր և կարոտ,
Ինչ որ լավ է աշխարհում ու մարդկային սրտին մոտ,
Գեղեցկությունն էր երգում և հմայքը կանացի,
Թե—«էդն ու որձն հավասար՝ առյուծ է ձագն առյուծի»:

Եվ այն հեռու դարերում ժողովրդի մեծ ուրդին
Աղապարհներն էր երգում մարդու հոգուն ու ճարտին,
Շապարհներն էր հոգուն՝ լույս էր սփռում երգերում
Եվ գիշերից մինչև լույս նա գրում էր ու գրում...

3

Երբ լուսինը բարձրացավ, նայեց կանաչ անտառին,
Դողով նա գործն ալարտեց, հիշեց չքնաղ թամարին,
Ու քիչ հեռու մի նժույգ դեպի բերդն էր սլանում,—
Շոթան էր այն, որ հալարած «Վաղրենայիդին» էր սանում:

Handwritten text in a cursive script, possibly a name or title, followed by a double underline.



ԲԱԽՉԻՍԱՐԱՅԻ ՉԱՏՐՎԱՆԸ

(Ա. Պուշկինից)

Շատերն այնպես, ինչպես և ես,
այցելել են սույն շատրվանը, բայց
ոմանք նրանցից չկան արդեն,
մյուսները քափառաբեղում են հե-
ռասաններում:

ՍԱԱԴԻ

Գիրեյն էր նստել հայացքը մոլոր՝
Բերնին՝ մխացող սաթյա ծխամորձ.
Խռնվել էր անեղ խանի չորս բոլոր
Մարկարարո արքունիքը ողջ:
Ամեն ինչ խաղաղ, լուռ էր պալատում.
Երկյուղածությամբ խոնարհված նրան,
Մռայլված դեմքին վշտի ու ցասման
Նշաններ էին ամենքը կարդում:

Բայց իշխանավորն անեղադուռդ
Ձեռքով անհամբեր նշան է անում.
Գնում են նրանք խոնարհ ու անխոս:

Մենակ է նա իր առանձնարանում.
Կուրծքը ավելի ազատ է շնչում:
Ճակատն ավելի ժիր կենդանությամբ
Մատնում է սրտի հուղումն անագին:
Այդպես է ծովի դողդոջ ալիքին
Միշտ արտացոլում երկինքը սևամպ:

Ի՞նչն է փոթորկում զոռ հոգին նրա
Ի՞նչ մտքով է նա դրադիւած արդյոք
Գնում է նորից Ռուսիայի վրա,
Լեհաստանն է նա ենթարկել ուղում,
Վաւիւում է ոխով արյունածարամ,
Թե իր բանակում նկատել է դավ,
Լեռնականներէ՛ց է արդյոք սարսում
Թե՛ ճենովայի դավերէ՛ց խարդախ:

Ո՛չ, ձանձրալի է ռադմի փառքը սին,
Հոգնել է արդեն բազուկն ահարկու,
Եվ չի մտածում նա կռիւի մասին:

Գուցե մի խարդախ. դավաճանություն
Մուտք է գործել իր հարեմը լռին,
Եվ նա՝ գերության դռստը հեշտասուն
Իր սիրտն է ծածուկ հանձնել դյավուրին:

Ո՛չ, Գիրեյ խանի կանայք մշտաժախ,
Որ սիրտ չեն անում մտածել, ցանկալ,
Տրտում անդորրում փթթում են խաղաղ,
Հսկողության տակ՝ աչալուրջ ու պաղ.
Չանձրութի գրկում միշտ անմխիթար
Նրանք չգիտեն դավաճանություն:
Պահւում է նրանց հմայքն անվթար
Հարեմի դովում անձայն ու թաքուն:
Այդպես հարամի ծաղիկն է ապրում՝
Հալած ջերմոցի տխուր ապակուն:
Ու նրանց համար, հերթով անընդհատ,
Օրեր, ամիսներ, տարիք են անցնում,
Իրենց հետ մեկտեղ նրանք աննկատ
Տանում են և՛ սեր, և՛ ջահելություն:
Միանման է ամեն օրը ջոկ,
Ծանր են ժամերը հարեմի ծոցում,
Ուր որ փթթում է ծուլությունն անհող
Եվ ուր հաճույքն էլ քիչ է առկայծում:

Դեռահաս կիներն այն ցանկանալով
 Սրտերը իրենց խարել մի բանով,
 Փոխում են անվերջ հազուստներ շքեղ
 Զրույց են անում, խաղում միատեղ,
 Կամ թե ջրերի աղմուկում կայտառ՝
 Նրանց թափանցիկ շիթերից վերև
 Մահուն խմբերով՝ զով, խառատերև
 Սոսիների տակ շրջում անդադար:
 Ներքինին է միշտ այնտեղ շրջում չար:
 Այնտեղ նրանից փախչելն է իզուր.
 Հայացքն իր լափողոտ, լսելիքը սուր
 Հետևում է միշտ ամեն մի բանի:
 Նրա ջանքերով մտել է այնտեղ
 Հաղթափական կարգ: Եվ կամքն է խանի
 Լուկ նրա համար կանոն ու օրենք.
 Նա չի կատարում նույնքան խստորեն
 Նույնիսկ սլափամբ այն սուրբ Ղուրանի:
 Նրա չոր հոգին սեր չի աղերսում.
 Նա, ինչպես արձան, տանում է, լսում
 Ծաղր, ատելություն, խոնարհ աղաչանք,
 Վերադարձների չարածճի խաղ,
 Հայացքներ երկչոտ, խաղաղ, հառաչանք,
 Չար արհամարհանք, արտունջներ նվաղ:
 Հայտնի է նրան բարքը կանացի.
 Եվ գիտե փորձով՝ նենգ է նա որքան,
 Թե գերության մեջ, թե աղափության.
 Քնքուշ հայացքը և անխոս լացի
 Կշտամբանքները չեն տիրապետում,
 Չեն իշխում բնավ նրա չար հոգուն.
 Նա նրանց արդեն չի էլ հալածում:

Երբ երիտասարդ կիները գերի,
 Արձակած իրենց մաղերը շքեղ,
 Լողանալու են գնում շողերին,
 Եվ երբ թափվում է նրանց նրբագեղ
 Մարմնին սառնորակ ջրերն աղբյուրների,
 Այդտեղ է նրանց անբաժան ծառան,
 Եվ դիտում է նա աչքով անտարբեր

Գեղանի կանանց խումբը մերկիրան:
Անձայն քայլերով հարեմում խավար
Թափառում է նա ողջ գիշերն անքուն,
Գորգերն է կոխում նա ըղձուշտարար,
Դռների ետե կանգնում է թաքուն,
Մահճից մահիճ է նա անցնում անձայն
Ու միշտ հողատար հսկում խանախան
Կանանց հանգիստը՝ փարթամ, վահանինջ:
Գիշերվա ամեն թոթովանք ու շունչ,
Սարսուռ կամ հառաչ, ամեն-ամեն ինչ
Նկատում է նա և աղան լսում,
Եվ վա՛յ է նրան, ով որ երազում
Ուրիշի անուն շշնջա մի օր,
Կամ թե բարեհաճ իր ընկերուհուն
Վստահի իրեն միտքը մեղավոր:

Էլ ի՞նչ է վիշտը ճնշում Գիրեյին.
Ծխամորճն արդեն հանգել է ձեռին.
Լուռ՝ նշանի է սպասում դռան մոտ,
Իր շունչը պահած, անշարժ ներքինին:
Տերը մտադրադ ոտքի է կանգնում.
Նրա հանդիման ահա դուռն է բաց,—
Նա անխոս դեպի հարեմն է գիմում
Հարեմն երբեմնի սիրելի կանանց:

Եվ սպասելով հայտնվելուն խանի,
Պանված ավերին ժիր շատրվանի,
Գորգերի վրա մեռաքսանկար
Կանայք նստոտած խմբերով կայտառ՝
Հետևում էին մանկան խնդուխամբ,
Թե ինչպես վարում, ջրերում հստակ,
Մարմար հատակին ձուկն է լողում ծուլ:
Ու նկատում էին ձկներին դիմամբ,
Ոմանք նրանցից գինդեր ոսկեծուլ:
Մինչ ստրկուհիք չորս կողմից նրանց
Մատուցում էին անուշ օշարակ.
Ու նրանց դնդուն խմբերդից հանկարծ
Թնդաց հարեմի շենքը բովանդակ:

1.

«Արցունքի, լիցի վոխարեն մարդուն
 Երկինքը վերուստ հասողցում է լի.
 Երջանիկ է խեղճ փակիրն էլ անտուն,
 Թե ծերանալիս Մեքքա այցելի:

2.

Ով սրբագործի վեհ Դանուր գետի
 Եզերքն իր մահով՝ երջանիկ է նա.
 Կրքոտ ժպիտով կույսը դրախտի
 Նրան ընդառաջ սլիտի սլանա:

3.

Բայց նա է, Զարեմ, ճրջանկազույն մարդ,
 Ով որ սիրելով հեշտանք ու անդորր,
 Կզգվի, անհռչ, քեզ ինչպես մի վարդ,
 Այստեղ—հարեմի լռության մեջ խոր»:

Երգում են: Բայց նա՝ Զարեմն ուր է, ուր
 Աստղիկը սիրո, դարդը հարեմի.
 Ավանդ նա նստած գունատ ու տխուր,
 Գովերդը նրանց չի լսում հիմի:
 Արմավենու պես, նկուն, հողմահար,
 Գլուխը ջահել խոնարհել է վար,
 Չի գալիս աչքին ոչինչ աշխարհում.
 Զարեմին Գիրեյն արդեն չի սիրում:

Նա դավաճանեց... Բայց քեզ հետ այն ո՞վ,
 Չքնաղ վրացուհի, կմբցի գեղով:
 Քո՝ շուշանային ճակատի բոլոր
 Ծամերդ ես հյուսել դու կրկնաժողով.
 Զույգ աչքերը քո՝ սե ու հմայիչ
 Մութն են գիշերից, ցերեկից էլ ջինջ:

Ո՞ւմ ձայնն է մատնում ավելի ուժգին
Վառվող ցանկության պոռթկումները բաց,
Ո՞ւմ գրգռանքներն են այնքան խորախոց,
Քան քո համբույրը ջերմ ու քնքշագին:
Ինչպե՞ս այն սիրտը, որ լի է քեզնով,
Պիտի արբուխի ուրիշի համար:
Բայց Գիրեյն անհոգ և դաժանարար
Արհամարհեց քո դեղը հոգեթով:
Եվ ցուրտ ժամերին իր դիշերային
Նա միշտ էլ մենակ, մռայլ է լինում,
Այն օրից, երբ որ լեհ իշխանուհին
Փակված է անդարձ նրա հարեմում:

Շատ վաղուց չէր, ինչ մանկամարդ Մարին
Աչք հառեց օտար երկնակամարին,
Վաղուց չէր նա իր դեղով դուրեկան
Ծաղկում աշխարհում իրեն հարադատ:
Հսկարտ նրանով՝ հայրը ալեղարդ
Իր սփոփանքն էր համարում նրան,
Եվ նրա կամքը պատանեկական
Պետք է հոր համար միշտ օրենք լիներ:
Ու նրա միակ հոգսն էր մշտապես,
Որ վիճակը իր սիրելի դստեր
Պարզորոշ լիներ դարձան օրվա պես,
Որ նույնիսկ վշտերն այն վայրկենական
Չըմռայլին աղջկա հոգին,
Եվ ամուսնացած լինելով անգամ
Խանդադատանքով հիշեր նա կրկին
Օրերն հաճույքի, օրերն աղջկական՝
Անցած՝ դյուրասահ երազի նման:
Դյուլթում էր մարդու նա ամեն ինչով,
Խաղաղ իր բարքով, նազուն շարժմունքով,
Խորունկ աչքերով կապուտակ ու ջինջ:
Բնության տված ձիրքերը թովիչ
Զարդարում էր նա նրբին արվեստով,
Կենդանացնում էր տավղով մոգական
Խնջույքները ճոխ, ընտանեկական:

Չքնաղ Մարիի ձեռքն էին փնտրում
Անթիվ հարուստներ, իշխաններ հայտնի,
Եվ շատերն էին տանջվելով դադարի
Մարիի համար հալ ու մաշ լինում:
Բայց նա իր հոգում խաղաղ ու անդորր
Դեռ սեր չգիտեր: Դղյակում իր հոր,
Իրեն մտերիմ ազնիւներն հետ,
Հանգիստ օրերն այն անկախ ու անհոգ
Զվարճության էր նըվիրում նա լուկ:

Վաղուց էր: Եվ ի՞նչ: Թաթարներն հոծ
Ամբոխն ինչպէս դետ Լեհաստան խուժեց.
Չի փութում արտում հրդեհն հողմարոց
Նույն արագությամբ սոսկալի ու մեծ:
Որբացալ հանկարծ երկիրը ծաղկած,
Պատերազմներից դարձաւ խեղանդամ:
Անցան, զվարճանքն ու կյանքը հանգիստ,
Գյուղեր, անտառներ լուռ են, տրամանիստ,
Եվ ամառացաւ դղյակը փարթամ:

Լուռ է Մարիի սենյակն առանձին...
Տան եկեղեցում, ուր սառնն նիրհով
Մասունքն են հանգչում իրենց թագերով
Եվ իշխանական դինանիշերով,
Կանգնած է մի նոր գերեզման կրկին...
Հայրը շիրիմում, դուստրը՝ գերիվար,
Ժլատ ժառանգն է իշխում դղյակին
Եվ վերալորում լուծով ծանրագին
Երկիրն ամայի և անմխիթար:

Բախչիսարայի ուլաւոր, ամանդ,
Թաքցընում է լուռ՝ ջահել դշտահուն.
Այժմ գերության գրկի մեջ խաղաղ
Թռչնելով՝ Մարին լալիս է, տխրում:
Խանն է անբախտին սակայն խնայում.
Հուզում են խանի քունը կարճատե
Արցունքը նըրա, հառաչն անհանգիստ,
Եվ նրա համար դարձրել է թեթե

Նա իր հարեմի օրենքները խիստ:
 Ձի այցում կույսին, գիշեր կամ ցերեկ,
 Խանական կանանց խստադեմ ծառան
 Եվ իր հողատար ձեռքերով նրան
 Դեպի մահիճը չի տանում երբեք:
 Ձի համարձակվում երբեք աղջկան
 Իր վիրավորիչ հայացքը հառել:
 Եվ Մարին ծածուկ իր լողարանում
 Ստրկուհու հետ մենակ է մնում:
 Ձի համարձակվում խանն իսկ խռովել
 Տխուր հանդիսուր իր չքնաղ դերու,
 Եվ թույլ է տրված հարեմի հեռու
 Մի բաժնում նրան ապրել միայնակ,
 Եվ թվում է՝ այդ առանձնարանում
 Թաքնում է մի ոչ երկրային էակ:
 Գիշեր ու ցերեկ այնտեղ սիրամոր
 Պատկերի առաջ կանթեղ է վառվում,
 Լուսթյան մեջ հույսն ու հավատը խոր,—
 Վշտահար հողու սիրտիանքը այդ,—
 Վաղուց ապրում են այնտեղ միասին
 Եվ հիշեցնում են սրտին անընդհատ
 Մերձավոր. վրսեմ աշխարհի մասին...
 Եվ աղջիկն այնտեղ թափում է արցունք՝
 Խանդոտ կանանցից հեռու և ծածուկ:
 Եվ, մինչ թաղված է չորս կողմն ամեն ինչ
 Հիմա հեշտանքում այն խելացնոր,
 Հրաշքով աղատ անկյունն հեռավոր
 Պահպանում է խիստ լուսթյունը ջինջ:
 Այդպես էլ սիրտը մոլորյալն դոհի
 Հափշտակույթյան մեջ էլ ախտակիրք
 Պահպանում է միշտ մի սուրբ երաշխիք,
 Մաքուր զգացմունք մի աստվածային...

Իջավ գիշերը, ծածկվեցին մութով
 Տալրիկյան դաշտերն, ահա քաղցրաթով
 Սոխակի երգն եմ լսում ես հեռվում՝
 Դափնեծառերի խաղաղ հովանում:

Լուսինն է ծագում աստղերի խմբով
 Ու սփռում իր խոնջ շողերը չորս դին՝
 Մութ անտառներին, լեռներին, հովտին:
 Պարուրված իրենց ճերմակ քողերով,
 Սողերներն ալես թեթև, վեաճեառուն,
 Անցնում են շտապ ահա տնից տուն
 Բախշիսարայի փողոցներով նեղ՝
 Պարզ թաթարների կանայք, որ մեկտեղ
 Կիտեն իրիկվա ժամերը անքուն:
 Լուց պալատը, հեշտանքի գրկում
 Հարեմը մտավ անխռով, խոր նինջ:
 Ու չի խանգարում այս ժամին ոչինչ
 Գիշերն այս խաղաղ: Զննել է չորս դին
 Պահակն հուռալի, դգաստ ներքինին,
 Քնած է նա այժմ, բայց ահը կրկին
 Տաղնապում է իր քնահար հոգին:
 Դավաճանության է նա միշտ սպասում,
 Որ իրեն հողուն հանգիստ չի տալիս:
 Թղում է հաճախ ինչ-որ փափառեկ,
 Ինչ-որ խշխշոց, ճիչեր է լսում
 Ու իրեն խարող ձայնը լսելիս
 Արթնանում է նա, դողում և կրկին
 Լսելիքը սուր սարսափած լարում:
 Բայց լուռ է չորս դին, լուռ ու հեշտագին,
 Միայն մարմարյա խորքից՝ քաղցրաձայն
 Շատրվաններն են դեպի վեր դարկում,
 Եվ իր սիրելի վարդից անբաժան
 Սոխակն է մթնում իր երգը երգում:
 Երկար է նրանց լսում ներքինին,
 Մինչև որ նորից տրվում է քնին:

Ի՞նչ լավ ու շքեղ է արեւելքի
 Մութ գիշերներն հմայքը խաղաղ.
 Ի՞նչ քաղցր են նրանց ժամերը հոսում
 Մարգարեապաշտ այս մարդկանց համար:
 Ինչպիսի հեշտանք նրանց տներում,
 Այն կախարդական մութ այգիներում,

Հարեմներէ մեջ լուռ ու անվտանգ,
Ուր ամեն մի բան լուսնյակի ներքո
Լի է լռութեամբ, խորին դադանիքով
Եվ ներշնչումով մի քաղցրահեշտանք:

Քնած են կանայք: Լուի մեկն է արթուն:
Շնչաստառ՝ տեղից ելնում է նա վեր:
Քայլում է, ահա, ձեռքով անհամբեր
Բացում է դուռը: Գիշերվա մթնում
Նա թեթեաքայլ առաջ է դնում...

Դեմը՝ նիւնեւորվ վախկոտ, մտահոգ,
Ծեր ներքինին է հատակին սլափել:
Ա՛խ, սիրտն է նրա անողորմ ու սլաղ,
Խարուսիկ է շատ այդ քունն էլ խաղաղ:
Կինը ողու պես անցավ անարգել:

Դուռն է նրա դեմ, տարակուսանքով
Ամուր փակին է անաղմուկ դիպչում
Մըթան մեջ նրա ձեռքը դողդոջուն:
Մտալ: Իր շուրջն է դիտում զարմանքով...
Պատում է նրան ահ խորհրդավոր:
Ահա կանթեղի լույսը մենավոր,
Տապանակն ահա՝ թույլ լուսավորված,
Հեղ կերպարանքը անբիծ տիրամոր
Եվ խաչը՝ սիրո նիշը սրբազան...
Ողջը, վրացուհի, քո հողում հանկարծ
Արթնացրեց ինչ-որ հարադատ մի բան
Եվ խոսեց նորից վաղուց մոռացված
Օրերի բոլոր հնչյուններով հին:
Դեմը սլափած է նա՝ իշխանուհին,
Եվ խորունկ ջերմից կուսական նիւնի
Այտերն են վառվում, և դեռ ցույց տալով
Հեռքերը խոնավ արտասուքների,
Լուսավորված են հողնարեկ ժպտով:
Իր լույսն է տալիս լուսինն էլ այդպես

Ծաղիկին՝ ծանրացած անձրևի շիթով:
Եղեմի որդին՝ հրեշտակն ասես
Երկնքից իջել, սավառներ է լալ
Եվ խոր քնի մեջ արցունք է թափել
Հարեմի անրախառ գերուհու համար:
Ալմղ, քեզ, Զարեմ, ի՞նչ է պատահել...
Կուրծքն է կըծկվում նրա շշտահար,
Ծնկներն են ահա ծալվում ակամա,
Եվ աղոթում է. «Գթա՛ ինձ, գթա՛,
Եվ մի մերժիր իմ պաղատանքը դու...»:
Խոսքերը նըրա, շարժումնքն ու հառաչն
Աղջըկա խաղաղ քունն են ընդհատում,
Եվ իշխանուհին անով իր առաջ
Անձանոթ կնոջ դեմքն է նկատում:
Շփոթված, ձեռքով դողդոջ-վարանոտ
Նա լեր է հանում նըրան ու ասում.
«Ո՞վ ես... գիշերվա պահին միայնակ
Ի՞նչ ունես այստեղ»։— «Ես եկա քեզ մոտ.
Փրկիր ինձ, փրկիր, իմ կյանքում մենակ
Հույսն է մնացել ինձ այսուհետև...
Վայելեցի բախտն երկար ժամանակ,
Օր-օրին եղա անհոգ ու թեթև,
Եվ վայելքն անցավ ինչպես մի սավեր:
Կործանվում եմ ես, բայց լսիր ինձ դու.
Ես ծնունդ առա ոչ այստեղ, հեռու,
Շատ հեռու մի տեղ... բայց մինչ օրս էլ դու
Անցած օրերի դեպքերը բոլոր
Հիշողությանս մեջ քանդակված են խոր.
Ես հիշում եմ մեր լեռներն երկնաբարձ,
Լեռներում հոսող հեղեղները գիժ,
Հիշում եմ մեր խիտ անտառներն անանց,
Ուրիշ օրենքներ և բարքեր ուրիշ.
Բայց ինչո՞ւ, արդյոք, և իմ ո՞ր բախտից
Թողի հայրենի եղբայրներն իմ այն.
Ձը դիտեմ, ես ծովն եմ հիշում միայն
Եվ մարդուն այնտեղ՝ առաքատներից
Շատ բարձր կանգնած...

Օտար էին ինձ

Դեռ մինչև հիմա թե՛ վշտեր, թե՛ վախ,
 Ու միշտ հարեմի անդորրում խաղաղ,
 Նըրա ըստվերում ծաղկում էի ես,
 Սպասում սրտով հնազանդ ու հեղ
 Սիրո առաջին քաղցր փորձության:
 Ըղձերն իմ ծածուկ՝ իրականացան:
 Գիրեյն ընտրելով անդորր ու հեշտանք՝
 Թողեց պատերազմն արյունաթաթալ,
 Թողեց սոսկալի ամեն արշավանք
 Եվ նորից իր լուռ հարեմը մտալ,
 Եվ սպասումով անորոշ՝ խանին
 Մենք ներկայացանք: Մրահում լսին
 Հայացքն իր պայծառ հասել էր նա ինձ,
 Ի՛նձ կանչեց իր մոտ... Եվ այդ օրվանից,
 Անընդհատ հարրած դմայլանքով՝ մենք
 Երջանիկ էինք: Եվ ոչ մի անգամ
 Ո՛չ բամբասանքը և ոչ էլ չարակամ
 Խանդի տանջանքը, կասկածները նենդ,
 Ո՛չ էլ ձանձրութիւն մեզ չէին հուղում:
 Մարի, հայտնիւնցիր դու նրան մի օր՝
 Ավանդ, այդ օրից ինչ - որ հանցավոր
 Խոհով մռայլիւնց նըրա դուռ հողին:
 Դավաճանելով Գիրեյն արդեն ինձ՝
 Ականջ չի դնում իմ նախատինքին,
 Ձանձրանում է նա իմ ախ ու վախից,
 Ըղղացմունքներն իր անցած ու նախկին
 Զրույցներն ինձ հետ՝ էլ չկան բնավ:
 Դու չես մեղսակից նըրա հանցանքին,
 Մեղավոր չես դու, ես գիտեմ այդ լավ...
 Եվ այսպես, լսի՛ր, գեղեցիկ եմ ես,
 Ամբողջ հարեմում միայն դու ես, որ
 Կարող ես լինել ինձ վտանգավոր,
 Բայց կըքի համար ծնունդ առա ես,
 Չես կարող երբեք դու սիրել ինձ պես,

Էլ ինչո՞ւ սառն հմայքով հիմա
 Նըրա թուլակամ սիրտն ես առնապում:
 Թող ինձ Գիրեյին, միայն իմն է նա,
 Այրում է դեռ ինձ համբույրը նըրա,
 Տվել է նա ինձ սոսկալի երդում,
 Բոլոր իղձերը, մտքերն իր բոլոր
 Իմոնց հետ էր նա ժողուց զուգորդում.
 Նա ինձ կսպանի դաժանելով...
 Լալիս եմ ահա և քո առաջ, տես.
 Ծընրադիր ընկած, և սիրտ չանելով
 Քեզ մեղադրել, աղաչում եմ ես՝
 Ետ տուր իմ խինդն ու հանգիստը կրկին,
 Նախկին Գիրեյին դարձյալ դու ինձ տուր...
 Մի հակաճառիր դու ինձ ոչնչով,
 Նա իմն է միայն, բայց քեզնով է կույր:
 Արհամարհանքով, խնդրով թե ղշտով
 Զըղվեցրու նրան, ինչով որ կուղես,
 Երդվիր ուրեմն—(թեև թողի ես
 Խանի կանանց մեջ Ղուբանի սիրուն
 Անցած օրերի հավատը իմ հին,
 Բայց հավատն իմ մոր եղել է քո նույն
 Հավատը), երդվիր նըրանով իմ դեմ
 Գիրեյին նորից ետ ալ Զարեմին...
 Բայց լսիր, եթե ստիպված եմ քեզ...
 ... Ապա ես դաշույն բանեցնել դիտեմ,
 Կովկասին մոտիկ ծնունդ առա ես»:

Ասաց ու հանկարծ չքացավ: Մարիան
 Չի համարձակվում հետևել նրան:
 Հասկանալի չէ անմեղ աղջկան
 Տանջահար անող կրքերի լեզուն,
 Բայց ձայնն է նրանց անորոշ լսում՝
 Ե՛վ սարսափելի, և՛ օտարոտի:
 Ի՞նչ արցունք, աղոթք նրան այս անգամ
 Անպատվությունից պիտի ազատի:
 Ի՞նչ է սպասում: Մի՞թե դառնահամ
 Զահել օրերի մնացորդը կարճ՝
 Նա կապրի, որպես անարգված մի հարձ:

Օ, ամբար իմ, եթե Գիրեյը համառ
 Թողներ հեռավոր զնգանի մեջ այս
 Թշվառ աղջկան, ընդմիշտ մոռանալ,
 Եվ կամ թե հանկարծ մահը վաղահաս
 Ընդհատեր նրա կյանքը վշտահար,
 Ի՞նչ ուրախությամբ նորահաս Մարին
 Հրաժեշտ պիտի տար տխուր աշխարհին:
 Կյանքի թանկագին պահերն իր համար
 Անցել են վաղուց ու արդեն չկան:
 Ի՞նչ ունի կյանքում նա այս անապատ:
 Ժամ է. Մարին, թշվառ աղջկան,
 Ահա՛ կանչում են ժպտով հարազատ
 Դեպի գիրեն երկնի խաղաղ ու ադամ:

Սլացան օրեր, չկա Մարիան,
 Մի ակնթարթում որբուհին մարեց,
 Աշխարհն ըղձալի նա լուսավորեց
 Հայտնվելով նորեկ հրեշտակի նման:
 Բայց ի՞նչը դադաղ մտքեց նրան,
 Անհույս գերության վիշտը, թե անբուժ
 Մի հիվանդություն, կամ աղբյուր մի այլ-
 Ո՞վ գիտե: Չկա էլ Մարին քնքուշ:
 Ամայի դարձավ սլալատը մռայլ,
 Գիրեյը դաժան այն թողեց դարձյալ
 Եվ առած նորեկ ամբողջն իր թաթալ
 Արշավեց չարկամ դեպի հողն օտար:
 Ռազմի փոթորկում նա քառատըրով
 Եվ արյունըռուշտ թռչում է տրտում,
 Բայց թաքնված է միշտ խանի սրտում
 Ուրիշ հույզերի կրակն անըստի:
 Հաճախ մարտերում այն օրհասական
 Թուրն է քաշում նա և դարկի ժամին
 Մնում է անշարժ, կանգնում է հանկարծ,
 Ապա խելահեղ նայում է չորս դին,
 Նեւում է դույնը՝ ասես սարսափած.
 Ինքն իրեն ինչ-որ բան է փափում,
 Եվ շարտասուքն է դեպի սկս հոսում:

Արդեն մոռացված ու արհամարհված
Հարեմը վաղուց չի տեսնում խանին:
Եվ կանայք այնտեղ տանջանքի տրված,
Ներքինու սառն հսկողության տակ
Պառաւում են լուռ: Չըկա վրացուհին
Վաղուց նըրանց մեջ: Զրերի անտակ
Անդունդի խորքը նետեցին նըրան
Մի օր հարեմի պահակներն անձայն:
Երբ իշխանուհին մեռավ, այն գիշեր
Ավարովեց նըրա կյանքն էլ տանջալի,
Որքան էլ հանցանքն այն խոշոր լիներ,
Պատիժը դարձյալ մեծ էր, սոսկալի:

Մատենելով ռազմի հրո ճարակին
Կողկասին մոտիկ երկրները բազում,
Ռուսիայի խաղաղ գյուղերը, կրկին
Խանը ետ դարձավ հողը տալրիկյան
Եվ իր պալատի մի անջատ մասում
Մարիի ախոռը, ջինջ հիշատակին
Շինեց մարմարյա մի մեծ շատրվան:
Վերեում կա խաչ, շուրջը՝ միասին՝
Կա մահմեդական մի կիսալուսին:
(Խորհրդանիշն այդ համարձակ, անշուշտ,
Արդյունքն է խղճուկ անիմացության):
Կա մի մակադիր, դեռ չեն հարթել այն,
Ու դեռ չեն կրծել տարիներն անկուշա:
Եվ այդ գրության դժերով օտար
Զուրն է մարմարեց ճողվում անդադար,
Սառն արցունք դարձած կաթում հատակին,
Եվ չի պապանձվում, չի լուռ երբեք:
Այդպես է ողբում մայրը զշտարեկ
Պատերազմի մեջ ընկած զաւակին:
Այն երկրում ջահել կույսերն ու կանայք
Իմացան մի օր գրույցը այդ հին
Եվ հուշարձանի անունը նրանք
Արսաւուհների Եւսրփան դրին:

Թողած վերջապես հյուսիսը հեռվում,
 Մոռացած խնջույք, ուրախ կերուխում,
 Ես այցելեցի Բախչիսարայի
 Վաղուց մոռացված պալատն ամայի:
 Լուս միջանցքներով շրջեցի այնտեղ,
 Ուր այն թաթարը, չարիքն ազդերի.
 Խրախճանքներ էր սարքում խելահեղ,
 Եվ թողած սարսափն արշավանքների՝
 Թաղվում ծուլության գրկի մեջ շքեղ:
 Հեշտանքն է շնչում մինչ այսօր էլ դեռ
 Դատարկ պարտեզում և սենյակներում.
 Զրերն են ցայտում, վառվում են վարդեր,
 Խաղողի վաղերն են վերև ոլորվում
 Եվ դեռ պատերին շողում է ոսկին:
 Ես տեսա խարխուլ, հին ցանկապատեր,
 Որոնց ետևում, իրենց դարունքին,
 Համբուլով իրենց թաղրենները սաթ
 Ախ էին քաշում կիներն անաղատ:
 Եղա խանական դերեղմանոցում,
 Տերերի վերջին այդ օթեանում:
 Տասնամյակներն այստեղ պլսակված
 Մարմարաքանդակ ճերմակ չալմայով—
 Թվում էր մի պահ՝ լսելի ձայնով
 Բախտի պատգամն են հաղորդում մարդկանց:
 Ո՞ւր են խաները և հալեմը, ո՞ւր:
 Խաղաղ է չորս դին, ամեն ինչ տխուր:
 Փոխվեց ամեն ինչ... Բայց այն ժամանակ
 Այնտեղ իմ սիրտը դրանով չէր լի,
 Շատրվանների ձայնն ու բուրավի
 Շունչը վարդերի հակում էին ինձ
 Դեպի մոռացում, միտքս ակամայից
 Տրվում էր հուղման մի անմեկնելի:
 Եվ սամառնաթե մի ուրուր դարձած՝
 Կույսն էր հայտնվում այնտեղ իմ դիմաց.

Օ՛, բարեկամներ, ասացեք, թե ում
 Հայացքը տեսա, թե ում քնքշալի
 Կերպարանքն էր ինձ այնտեղ հեռեւում
 Անխուսափելի և անվանելի:
 Արդյոք Մարիի հողի՞ն էր մաքուր,
 Որ մունջ հայանվեց այնտեղ իմ դիմաց,
 Թե Զարեմն էր այն՝ խանդավ րոնված
 Շրջում հարեմում ամայի և լուռ:

Հիշում եմ հայացքն այնքան սիրելի,
 Հմայքը նըրա դեռևս երկրային

.

Երկրպագելով լույ ահողորդ կյանքին
 Եվ մուսաներին, թողած փառք ու սեր,
 Օ՛ շուտով, շուտով կտեսնեմ կրկին
 Ես ձեզ, Սալգիրի խնդառատ ավեր:
 Լցված հուշերով իմ խորհրդալիզ
 Կելնեմ լեռների լանջը կապտալուրթ,
 Եվ կհմայեն հայացքս անհագուրդ
 Տալրիկյան ջրերն այնտեղ նորից նոր:
 Մոգական երկիր, բերկրանք աչքերի՝
 Աշխույժ են այնտեղ ըլուր թե անտառ,
 Սաթը խաղողի, հակինթները վառ,
 Հմայքն հյուրընկալ հովտադաշտերի,
 Զովը և՛ ջրի, և՛ բարդինների՝
 Ողջը անցորդին իր մոտ է կանչում,
 Երբ առաջնորդա ժամին անխրոմ,
 Լեռների վերա, առափնյա ճամփով
 Նրա քաջընտել ձին է սլանում
 Եվ կանաչալուռն ջրերն իր դիմաց,
 Այու-Դաղ լեռան ժայռերին փարած՝
 Ե՛վ շողում են վառ, և՛ աղմուկ հանում...

Ջ Բ Ն Հ Ն Բ Ս Ը

(Ա. Պուսկինից)

Լճի եզերքին, մի խուլ կաղնուտում,
Ճգնում էր հնում մենակյաց մի ծեր,
Նա ծոմ էր պահում, անվերջ աղոթում,
Եվ ուներ միայն միշտ մռայլ գործեր:
Եվ արդեն վաղուց հնազանդ բահով
Շիրիմ էր փորել ծերուկն իր համար
Ու մահ էր հայցում արդեն ապահով
Բոլոր սուրբերից հաճոյակատար:

Աղոթք էր անում ամռանը մի օր
Իրեն խրճիթի շեմի մոտ կանգնած՝
Գլխահակ ու լուռ ծերը ճգնավոր:
Մթաղնում էին թավուկները թաց,
Լճի երեսին մշուշն էր ծխում,
Կարմիր լուսինն էլ ամպերի միջին
Շրջում էր հանգիստ խաղաղ երկնքում,
Եվ ծերը մոլոր նայում էր լճին:

Նայում, աղամա ահով բռնված,
Իրեն հասկանալ նա չի կարենում ..
Տեսնում է ջրերն եռում են հուզված
Եվ հետո հանկարծ նորից խաղաղվում...
Եվ հանկարծ... թեթե—ստվերի նման,
Ճերմակ ինչպես վաղ ձյունը լեռներին,
Ելնում է ջրից մի կին մերկիրան
Ու լճի ափին նստում է լսին:

Նայում է կույսը ծեր ճգնավորին
Եվ հեռն էլ սանրում մաղերը իր թաց,
Ու աչքը կույսի հոլանի մարմնին՝
Դողում է ահից ծերը մենակյաց:
Ջեռքով է անում այն կույսը նրան,
Կանչում է գլխի շարժումով արագ...
Եվ ինչպես ընկնող աստղը հուրհրան
Թաղվում է նիրհող ալիքների տակ:

Գիշերն անքուն էր ծերը մեկուսի
Եվ ամբողջ օրն էլ անաղոթք մնաց.
Մտքումն ակամա այն չքնաղ կույսի
Կերպարանքն էր նա տեսնում իր դիմաց:
Մռթով պարուրվեց կաղնուտը կրկին,
Հուսիսն ամպերում անցավ համբընթաց,
Եվ ահա նորից լճի եղերքին
Ջքնաղ ու գունատ՝ այն կույսն է նստած:

Նայում է ծերին, գլխով է անում,
Հեռվից կատակով համբույր է տալիս,
Խաղում է հետո, ջրերը ճողիում
Ու մանկան նման ծիծաղում, լալիս,
Կանչում է նրան, քնքուշ հառաչում.
«Ինձ մոտ եկ, ինձ մոտ, ծերուկ ճգնավոր»...
Թաքչում է հանկարծ, ջրի մեջ կորչում,
Ու չորս կողմ կրկին լուրթյուն է խոր:

Երբորդ օրն արդեն ծերուկը մոլի
Լճի հմայիչ եղերքին նստել
Ջքնաղ կույսին էր սպասում էլի.
Եվ թափումները սկսեցին մթնել...
Երբ այդը ցրեց մռթը գիշերվա —
Էլ չգտնվեց ծերը սրբազան,
Միայն մանուկներն այն լճի վրա
Սպիտակին տվող մի մորուք տեսան:

Ե Ր Ե Ք Ա Ր Մ Ա Վ Ե Ն Ի

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

(Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎԻԳ)

Արարական աշխարհում, ավազուտի մեջ անծայր,
Հալարա ու ձիգ աճեցին արմավատու երեք ծառ:
Ու դուրս դալով նրանց տակ, ամուլ դեմնի խուռոչում,
Իր սառնորակ ջրերով մի աղբյուր էր կարկաչում,
Որ դեղեցիկ ու կանաչ տերևների հովանում
Թաքչում էր տապ շողերից և ավազից պաշտպանվում:

Եվ շատ ու շատ տարիներ եկան, անհետ դնացին.
Բայց հեռավոր աշխարհից եկած ոչ մի հողածին
Սառն աղբյուրի եզերքին, սրտով ծարավ, հողնատանջ
Չէր կառուցել դեռ երբեք տաղավարում այն կանաչ,
Եվ ոկոսեցին չորանալ տապ ու տոթից հրաշող
Տերևները այն փարթամ և աղբյուրը կարկաչող:

Տրանջացին ասածուն մեկտեղ ծառերն այն երեք.
«Նրա համար աճեցինք, որ չորանանք այստեղ մենք.
Ավազուտում անօգուտ մենք մեծացանք, ծաղկեցինք,
Տոթը խանձեց մեզ անվերջ և հողմահար ճոճվեցինք,
Ուրախ չարինք ոչոքի և մարդիկ մեզ չտեսան,
Անարդար է, օ՛ երկինք, քո վճիռը սրբադան»:

Հաղիվ էին դեռ լուկ, երբ հեռանալիստ կապույտում
Դեղին ավազն էր արդեն սյունանման պտտվում,
Ղողանջեցին բոժոժներն աններդաշնակ զնգոցով,
Սհա բռններ դույնդդույն — խալիկների ծածկոցով,
Եվ ուղտն ուղտի ետեից, ինչպես նավակն օվկիանում,
Օրորվելով հողմածեծ լուռ առաջ էր ընթանում:

Ծածանվելով ուղտերի սառլատների վերևում՝
Վրանների գեղադարդ փեշերն էին երևում,
Ու թխամորթ բազուկներ քղանցքն էին մերթ բացում
Եվ վրանից սևորակ աչքեր էին առկայծում...
Եվ հենվելով աղեղին, թեքած իրանն իր ճկուն,
Չափ էր գցում, բորբոքում արարն իր ձին աննկուն:

Ծառն էր լինում մերթընդմերթ և խոյանքով ահագին
Քանց նետահար մի հովաղ ուտնում էր ձին մոլեղին,
Եվ սպիտակ հագուստի սիրուն դարսերն այն թեթև
Ջիւղորի ուսերին ծփում էին հողմաթև,
Եվ աղաղակ-սուլոցով, արշավելով ըստեպում,
Իր նիզակն էր նա նետում, առնում՝ նորից շալրտում:

Եվ աղմուկով ծառերին քարավանն էր մոտենում,
Ու բացվեցին վրանների ահա նրանց հովանում:
Զնգուն կժերն են լցված, իսկ ծառերը գեղեցիկ,
Հսկայաբուն շարժվելով կատարները երկնածիղ,
Ողջունում են խնդալով անակնկալ հյուրերին,
Նրանց ծախմիս է մարում շալլա աղբյուրն անլուին:

Բայց խաղալը այս անգամ չէր խոնարհվել դեռ դետնին,
Երբ կացինը զնգալով իջավ նրանց արմատին,
Եվ ծառերը դարավոր սառլալվեցին անկենդան.
Մանուկները պոկեցին նրանց հագուստը փարթամ,
Մարմինները կտրեցին հեռո կացին-ուրազով
Եվ մինչև լույս այրեցին խաբույկների կրակով:

Իսկ երբ անցալ արեւմուտք մառախուղը վաղորդյան
Քարավանը զնդոցով շարունակեց իր ճամփան,
Եւ որպէս հետք տխրալի՝ անբարեբեր այն վայրում
Արդեն սառած, սպիտակ մոխիրն էր լոկ երեւում,
Մնացորդն էլ արեւի ճառագայթներն այրեցին,
Իսկ քամիներն՝ առնելով, ավաղուտում ցրեցին:

Եւ ավաղուտը հիմա ամայի է և լռին,
Ջեն շշնջում տերեւներն կարկաչահոս աղբյուրին,
Իղուր է նա աղերսում մարդարեւից շուք ու դով,
Նա ծածկւում է հիմա սոսկ արեւախանձ ավաղով,
Իսկ ուրուրն էլ դաշտային, միշտ մարդախույս ու տրտում,
Ֆրա գլխին կռնչով իրեն սրսն է ծվատում:

Թ Ա Մ Ա Ր Ը

(Լեւոնոսովից)

Դարյալի կիրճում խորունկ ու մթին,
Որտեղ թերեքն է գալարվում արագ,
Սևին տալով սև ժայռի ճակատին՝
Կանգնած էր վաղուց մի հին աշտարակ:

Այդ աշտարակում բարձրաբերձ ու նեղ
Ապրում էր մի օր թամար թագուհին,
Որ դեի նման նենդ էր ու անեղ
Եվ չքնաղ՝ ինչպես կույսը երկնային:

Եվ փայլում էր միշտ մի լույս ոսկեշող
Այնտեղ, գիշերվա խավարի միջում,
Երևում էր նա մթնում անցորդին
Ու գիշերային հանդստի կանչում:

Եվ լավում էր պարզ ձայնը թամարի,
Որ լի էր կրքով, ցանկությամբ մոլի,
Որ ուներ հմայք ամենակարող
Եվ իշխանություն անհասկանալի:

Հովիվ, փերեզակ, թե ուղմիկը քաջ—
Գնում են անտես այդ փերու ձայնին.
Դռներն են բացվում եկողի առաջ,
Եվ ներս է թողնում մռայլ ներքինին:

Եվ իրեն մահճում փափուկ, փեարալի,
Մարգարիտներով, խառով դարդարված,
Սպասում է նա հյուրին ցանկալի,
Դեմը գինու զույգ թասերն են դրված:

Փաթաթվում էին բազուկները տաք,
Շրթունքներն էին ջերմ հալվում իրար,
Ու վայրի ձայներն այն տարօրինակ
Ձէին դադարում գիշերում խալար:

Ասես թե հարյուր էին ու սլառանիք,
Այդ կես գիշերին դատարկ ամբոցում,
Խմբվել—եկել են մի մեծ հարսանիք,
Կամ թաղման ծեսում լալիս են, կոծում:

Բայց հենց արեգակն առավոտ ծեղին
Կապույտ լեռներին իր ցուքն էր նետում,—
Նախկին անդորրն ու խալարը կրկին
Տիրում էր այնտեղ մի ակնթարթում:

Թերեքն էր միայն Դարյալի կիրճում
Իրեն աղմուկով անդորրն այդ խղում,
Ալիքներն էին վեր ու վար թռչում,
Ալիքներն՝ իրար ետևից վազում:

Եվ տանում էին նրանք ողբալով
Դիակը անխոռ. այնժամ ինչ որ բան,
Պատուհանի մոտ սպիտակին տալով,
Հրաժեշտ էր ասում վերեւից նրան:

Եվ անջատումն այդ քնքուշ էր այնքան,
Այնպես անուշ էր այն ձայնը թվում,
Որ կարծես դալիք ուրախ տեսության
Սերն ու գգվանքն էր նրան խոստանում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Անուանը	5
Հաղերժական ընտրյալին	7
Հրաժեշտ Գորիին	9
Ղեկավարը	11
Ձեռքը	13

ՌԱԶՄԻ ՆՐԳԵՐ

Կռվի երգ	17
Հին ղինվորի նամակը	18
Երգ ղինվորի կռիվները մասին	20
Կտակ	22
Լենինգրադին	23
Լենինի քաղաքին	27
Մասկվա	28
Ղրիմի վարդերը	32
Հիմի էլ լուենք	34
Ջոհված ընկերոջս	35
Անվերնագիր	36
Եղենիները	38
Եղենին	40
«Սովետական Հայաստան»	41
Արտերը	42
Բեռլինն է պարտված	43
Պարծանք	44
Դյուցազնական	45
Սգա, Գերմանիա	48

Մեր Դոնն է ազատ	50
Դեպի Բեռլին	51
Երգը	52
Խաղաղության աղափնիները	54
Կասպիական դիշեր	56
Սպիտակ տունը	58
Երկտասարդական քայլերդ	59

ԽԱՌԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատախան Պուշկինին	63
Լիցեյում	65
Հուշարձան	76
Երգ Ֆելիքս Ջերժինսկու մասին	68
Օրացույցը	69
Ծիծեռնակը	71
Սեան	72
Հայրենի ջրերը	75

ԲԱԼԼԱԴՆԵՐ

Ջանգեղուր	79
Բալլադ տարտիղանի, նրա կնոջ ու ձիու մասին	82
Բալլադ տան մասին	85
Բալլադ կասկածյա մանկան և արևի մասին	89
Միակ բառը	93
Գարնանային	95
Ռուսթավելին	96

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

Բախչիսարայի շատրվանը	101
Ջրահարսը	118
Երեք արմավենի	120
Թամարը	123



Պատ. խմբագիր՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Կոնսուլսկ սրբագրիչ՝ Վ. ԴԱՔԵՍՅԱՆ

ՎՖ 03247: Պատվեր 108: Տիրաժ 3000:

Տպագր. 8 մամ.:


Հանձնված է տպագր. 10/VII 1949 թ.:

Ստորագրված է տպ. 25/VII 1949 թ.:

Հայպոլիգրաֆհրատի Վարչության № 3

տպարան, Ալավիրդյան 65,

Երևան— 1949 թ.:



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ի Ր

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
7	11 ն.	մարտական	մարտական
23	6 ն.	Աղբյուրանքներն անհեղա- շուք	Աղբյուրանքներն անհեղա- շուք
69	4—3 ն.	Ահա թերթիկներ, ողկույղ- ների հետ,—	Ահա մրդերի, ողկույղ- ների հետ,— Ահա թերթիկ- ներ.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0041730

ԳԻՆԸ 5 Ռ.

A $\frac{2}{6069}$